

ՀԵՂԻ ՀԱՇՎՈՎԿԱՐՄԵՑ — ԸՆԳԵԿԱՐԾՈՎՆԵՐ ՎԵՐՀՈՒԹՅՈՒՆ

Մ. ԿԱՊԵՔԻՆԵԼ, Ա. ԶԱՐԵՑԿԻ

ԿԻՏՐՈՆԻ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ



М. Капцинель, А. Зарецкий
Камнатная культура
лимона

Сельхозгиз, Ереван, 1937 г.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ցիտրուսային բույսերի խմբին են պատկանում կիտրոնը (լիմոնը), նարինջը, մանդարինը, դրեյփֆրուտը, կինկանը: Այդքաղությունը բույսերն արևադարձային և մերձարևադարձային ծագում ունեն: Աշխարհում համարյա չկա մի յերկիր, վորի բնակիչները վորպես սնունդ գործածելիս չլինեցին ցիտրուսային բույսերի բարձրարժեք և ոգտակար պտուղները: Ցիտրուսային բույսերը մարդու համար արժեքավոր են վոչ միայն նրանով, վոր նրանք չափազանց սննդարար են, այլև նրանով, վոր նրանք պարունակում են վիտամիններ: Վերջին ժամանակներս ապացուցված է, վոր կան վիտամինների մի քանի տեսակներ, վորոնցից յուրաքանչյուրը մարդու որգանիզմի համար յուրահատուկ նշանակություն ունի: Վիտամինների զանազան տեսակները նշանակվում են A, B, C, D և այլն լատինական տառերով:

Մարդու սննդի մեջ վորնե վիտամինի բացակայությունը խանգարում է մարդկային որգանիզմի նորմալ գործունեյությունը և առաջացնում այս կամ այն հիվանդությունը: որինակ՝ սննդի մեջ A վիտամինի բացակայությունը կամ անբավարար քանակությացնում է տչքի, ատամի և վոսկրի հիվանդություն: B վիտամինի բացակայությունը՝ ներվային համակարգության զանազան հիվանդություններ, C վիտամինի պակասությունը՝ ցինուզ հիվանդությունը: Շնորհիվ C վիտամինի այդպիսի հատկության, ոյն հաճախ անվանում են հակացինգային վիտամին:

Ցիտրուսային պտուղներն աչքի յեն ընկնում C վիտամինի չափազանց մեծ պարունակությամբ, վորի հետեւանքով և նրանք շատ արժեքավոր են մարդկային սննդի համար:

Ցիտրուսային պտուղները մեծ նշանակություն ունեն նուև ստամոքսի զանազան հիվանդությունների ժամանակ վորպես դիետային մթերքներ:

Պտուղներն արժեքավոր հումուրիթ են նույնպես կոնսերվի:

և հրուշակեղենի արդյունաբերության համար։ Նրանցից պատրաստում են պահածո հյութեր և կոնցենտրատներ, վորոնք զանազան բնեուացին արշավախմբերի համար անհրաժեշտ են վորպես հակառինգային միջոցներ։ Նրանցից պատրաստում են նաև զովացուցիչ ըմպելիքներ, ցուկատներ, մուրաբաներ, մարմելադներ, ժեղներ և այլն։

Բացի դրանից, ցիտրուսային բույսերը մեծ նշանակություն ունեն արդյունաբերության համար։ Բույսի համարյա բոլոր մասերը կարող են ողտագործվել վերամշակության համար, վորովինեաւ նրանք մեծ քանակությամբ յեթերային յուղ են պարունակում։ Տերևներից, ծաղիկներից և պտղի կճեղից ստացվող յեթերային յուղը մեծ չափով ողտագործվում պարփյումերիայի արդյունաբերության մեջ։

Նույնիսկ բույսի բնափայտը, վոր մեծ ամրություն ունի, լայնորեն ողտագործվում ե զանազան հյուսնային պարագաների համար։

Ահա ինչու ցիտրուսային բույսերի մշակության զարգացումը ԽՍՀՄ-ում ունի խոշոր ժողովրդատնտեսական նշանակություն։ Ահա ինչու կառավարությունը և կուսակցությունը ցիտրուսային բույսերի զարգացման գործին բացառիկ մեծ ուշադրություն են դարձնում։

Ինչպես արդեն ասված ե, բոլոր ցիտրուսացին բույսերն արևադարձային և մերձարևադարձային ծագում ունեն, դրա համար ել աչքի յեն ընկնում համեմատաբար ցածր ցրտադիմացկունությամբ և բացովյա պայմաններում կարող են աճել միամիացն, այսպես կոչված՝ մերձարևադարձային շրջաններում, այսինքն՝ այնպիսի շրջաններում, վորտեղ համարյա սառնամանիքներ չեն լինում, կամ թե սառնամանիքներն այնքան թույլ են լինում, վոր ցիտրուսային բույսերի զարգացման վրա վսասակար ազդեցություն չեն գործում։

Բաղմամյա դիտողություններով ապացուցված է, վոր առանձին ցիտրուսային բույսեր մեծ չափով տուժում են, կամ բուրովին փշանում հետևյալ ջերմաստիճանների դեպքում։

| | | |
|-------------------|----------|---------------------|
| Կինկաններ | 8—9 աստ. | սառնամանիքի դեպքում |
| Մանղարիններ | 7—8 » | » » |
| Նարինջներ | 6—7 » | » » |
| Գրեյլֆրուտներ | 6—7 » | » » |
| Ցիտրոններ | 5—6 » | » » |
| Կիտրոններ (լիմոն) | 5—5 » | » » |

Այսպիսով ցիտրուսային կուլտուրաները կարող են լավ աճել այն շրջաններում, վորտեղ նման սառնամանիքներ չեն լինում: Մեզ մոտ ԽՍՀՄ-ում՝ հատկապես Կովկասում, կան այդպիսի շրջաններ. դրանք Սև ծովի մերձափնյա շրջաններն են՝ Սոչիից մինչև Բաթումի: Այստեղ ցիտրուսային բույսերը լավ աճում և պտղաբերում են: Նրանց տարածությունն այդ շրջաններում տարեցտարի ավելանում է:

Այսպես, ցիտրուսային կուլտուրաների ընդհանուր տարածությունը Սև ծովի մերձափնյա շրջաններում մինչ հեղափոխությունը կազմում եր մոտ 400 հեկտար, ներկայումս 3000 հեկտարից ավելի յե. իսկ 1940 թվին այդ կուլտուրաների տարածությունը հասնելու յե մինչև 20000 հեկտարի:

Սակայն այդ տարածությունը դեռևս բավական չե, վորապեսզի լիովին բավարարի Միության աշխատավորների՝ այդ արժեքավոր պտուղների նկատմամբ յեղած պահանջը: Ուստի, ոչված շրջաններում ցիտրուսային կուլտուրաները դաշտացին պայմաններում զարգացնելուն զուղընթաց, լայն կերպով պետք է տարածվի ցիտրուսների մշակությունը հարավային շրջաններում՝ հատուկ շենքերում և ջերմատներում, և կիտրոնի (լիմոնի) մշակությունը սենյակում՝ անխտիր, Միության բոլոր շրջաններում:

Հյուսիսային շրջաններում կիտրոնը սենյակի պայմաններում մշակելու լիովին հնարավորության լավագույն որինակ և հանդիսանում Գորկու յերկրամասի Ոկա դետի վրա Պավլովի քաղաքը, վորտեղ չնայած սառնամանիքները հասնում են 40,6 տստիճանի, այնուամենայնիվ կիտրոսակառներում աճում և պտղաբերում է 2000-ից ավելի կիտրոնի ծառ, ըստվորում կիտրոնի մշակությամբ զբաղվում են ավելի քան 50 տարի:

Առանձնապես հիշատակության արժանի յե Ադրբեյջանի Երիսի քաղաքի բնակիչների հաքիմ Բարա Մամեդովի վորձը: Այժմ նա տակառների մեջ ունի տարբեր հասակի մոտ 200 կիտրոնի ծառ: 1935 թ. նոյեմբերին նա քաղել եր 2200 հասած կիտրոն և դեռ ելի 500 հատ մնացել եր ծառերի վրա:

Մամեդովը յուր բոլոր կիտրոնները տեղավորում է 200—300 քառ. մետր տարածություն ունեցող իր փոքրիկ պարտեզում, վորտեղ և շարում և կիտրոնի տակառները, իսկ ձմեռը փոխադրում է 35—40 քառ. մետր տարածություն և 2 լուսամուտ ունեցող սենյակ: Սառնամանիքները նուխիում հասնում են 20 և ավելի տստիճանի:

Մոռկզայի, Խարկովի և Միության այլ քաղաքների բազմաթիվ սիրողներ իրենց բնակարանները վոչ միայն զարդարելն զեղեցիկ մշտադալար ցիտրուսային ըռւյսերով, այլև նըանցից պտուղներ են ստանում:

Ցիտրուսային կուլտուրաները սենյակի պայմաններում աճեցնելու տեխնիկան բարդ չեւ Բայց լավ բերք ստանալու համար նրան պետք եւ կատարելապես ախրապետել:

ՅԻՄՊՈՒՍԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՓՈՓՈՒԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԱԵՆՅԱԼԻ պայմաններում կարելի յե աճեցնել ամեն տեսակ ցիտրուսային բույս՝ կիտրոն, նարինջ, մանղարին, ցիտրոն, կինկան, գրեյպֆրուտ և այլն։ Սակայն զրանք բոլորն ել լավ վորակի բերք չեն տալիս։ Որինակ՝ մանղարինի և նարնջի պտուղները առվարար թթու յեն լինում, վորը և խիստ չափով իջեցնում են նրանց վորակը։ Բայց յերեսույթին (թեկուղ վերջնականապես դեռ չի ստուգված) նույն բանը տեղի ունի և գրեյպֆրուտների հակամամբ։ Իսկ կիտրոնների համար բարձր թթվությունը հանդիսանում է նրանց բնորոշ արժանիքը և առանձնահատկությունը։ Բնդիանրապես ցիտրոնը մշակվում է նրա հոտավետ հաստ կճեղի համար, վորից պատրաստում են մուրաբաներ, ցուկատներ և այլն։ Թարմ վիճակում նրա միջուկն ուտելու համար պիտանի չե, զրա համար ել միջուկի վորակը նշանակություն չունի։

Այսպիսով, սենյալի պայմաններում աճեցնելու համար ամենամեծ ուշադրության արժանի յեն կիտրոնը և ցիտրոնը, վորոնց պտուղներն իրենց համի վորակով յետ չեն մնում այն պտուղներից, վորոնք աճեցվում են հարավում, բացովյա պայմաններում, իսկ վորոշ դեպքերում նույնիսկ գերազանցում են նրանց։

Սենեկային մշակության համար չափազանց մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև կինկանները։ Դրանք մշտադալար բույսեր են. ծաղկում են աշնանը, պտուղները հասունանում են ձմռանը և վաղ գարնանը (հունվարից—մարտ) ու յերկար ժամանակ մնում են ծառի վրա։ Սովորաբար թփերն ամբողջովին ծածկված են լինում մանր վուկեգույն պտուղներով։ Դրաշնորհիվ կինկանները բարձր են գնահատվում նաև վորպես դեկորտաբիվ բույսեր։ Պտուղները գործ են ածվում թե թարմ վի-

ճակում և թե վերամշակության համար (գլխավորապես մռըսացաների համար):

Դեկորատիվ նպատակների համար կարելի յեւ ուղարկութեածել նաև դառն պոմերանիցի, նարնջի, մանդարինի բոլոր պարագային տեսակները, վորոնց ծաղիկներն ունեն հիանալի բուրմունք և տալիս են գեղեցիկ պտուղներ: Իսկ սենյակի պայմանական լավորակ պտուղներ ստանալու համար կարելի յեւ հանձնարարել միմիայն կիտրոնը, ցիտրոնը և կինկանը:

Անհրաժեշտ ենկատի ունենալ, վոր սենյակի պայմաններում այդ կուլտորանների բոլոր փոփոխականներն ել միատեսակ արդյունք չեն տալիս: Կիտրոնի բազմաթիվ փոփոխակներից միայն մի քանիոն են ոլիտանի սենյակում մշակելու համար: Եռայնը վելարերում և ցիտրոններին և կինկաններին:

ԵՐԵՄԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՑ ՍՈՐՏԵՐԸ

Պավլովյան. — Այդ սորտը հայտաբերվել է Պովլովո (Ռկացետի վրա) քաղաքում: Յեղած տվյալներից կարելի յեւ յենթագրել, վոր այդ սորտն իտալական ծաղում ունի: Սակայն նրա ծաղումը և անունը ճշտորեն վորոշել հնարավոր չե, ուստի և այն անվանում ենք Պավլովյան (Պովլովյան):

Կիսատակառի մեջ բույրը հասնում է 100—110 սովորիք: Բարձրության՝ հաշված արմատավղիկից *): Բույրը թփի ձև ունի առանց փշերի: Տարվա ընթացքում ծաղկում են յերկու անգամ—գարնանը՝ մարտ—ապրիլ ամիսներին, աշնանը՝ հոկտեմբերին: Ծաղիկները խոշոր են, հոտավետ: պտուղները հասնում են նոյեմբերից սկսած մինչև մայիս: պտուղները միջակ մեծության են: Հոտավետ, հյութալի, դուրեկան թթու համով և շատ քիչ ուրբագ: Ակտում և պտղարերել 2—3-րդ տարին: Լավ բազմանում է կտըռներով (ճյուղի մասերով): Լիոնային շրջանների համար լավագույն սորտը կարելի յեւ համարել:

Կոր-աֆանյան (տեղական սորտ). — Խորհրդացին մերձարեւողացային շրջաններում այժմ դա ամենատարածված սորտերից մեկն է: Կիսատակառի մեջ բույրը հասնում է մինչև 2 մետր բարձրության: Պավլովյան կիտրոնից տարբերվում է

*) Արմատավղիկ կոչվում են այն տեղը, որ արմատը վերջանաւմ է և ցողունն է ոկտոպում: Սովորաբար պտղատու ծառերի բարձրությունը չոփվում է արմատավղիկից:



Նկ. 1. Պավլովյան կիտրոն

Նրանով, վոր սա աճում ե վոչ թե թփածե, այլ վորպես ծռու (բնածե):

Նոր-Աֆոնյան կիտրոնը փոփոխակների այն սորտին և պտուկանում, վորոնք ծաղկում և պտղաբերում են ամբողջ տարին: Նրանց պտուղները յերկարավուն են, միջակ մեծության, թեթև գալիքի խորառութու տեղերոց և բացդեղին գույնի: Միջուկը հոտավետ է, թթու դուրեկան համի. սերմ քիչ ունի. շատ բերքատու յեւ: Աջարստանի սլայմաններում տակառի մեջ 10—12 տարեկան հասակում մի ծառը տալիս է մինչև 300 պտուզ: Սովորաբար բազմացվում և պատվաստի միջոցով: պտղաբերում և ոլատվաստից հետո՝ 3—4-րդ տարին: Այս սորտի պակասությունը է այցանում և նրանում, վոր վայրի կիտրոնի վրա պատվաստելու դեպքում, սենյակի սլայմաններում, յերբեմն ձմեռը տերեաթափ է լինում: Այս սորտն ուշադրության արժանի յեւ հարավային և մերձաւնադարձային շրջանների համար, իսկ կտրոններով բազմացնելու դեպքում կարելի յեւ հանձնարարել նու մյուս շրջաններին:

Եվրիկա (ամերիկյան սորտ):— Մեզ մոտ սենյակի սլայմաններում տճեցնելու համար մեծ նշանակություն չունի:

Լիսրոն (ամերիկյան սորտ):— Մեր սլայմաններում զեռ և վերջնականապես ստուգված չեւ:

Ակլլամբանկա (ամերիկյան սորտ):— Համարվում է տմենացրտադիմացկուն սորտերից մեկը. մեզ մոտ զեռ ևս բավարար շափով փորձված չեւ:

Մեյերի կիտրոն.— Վորպես կիսատակառային կուլտուրա այս սորտն ունի համաշխարհային հոչակ: Այս սորտը դոկտոր Մեյերը փոխադրել է Չինաստանից 1908 թվականին: Ամերիկայում փորձարկվելուց հետո պարզվել է, վոր նա ամենացրտադիմացկունն է, և զիմանում է մինչև 10,5 տստիճան սառնամանիքի, այնինչ կիտրոնի բազմաթիվ մյուս սորտերը $5-6^{\circ}$ սառնամանիքից վոչնշանում են:

Մեյերի կիտրոնը հաջող բազմանում է կտրոններով և արժատագելման 2-րդ տարուց սկսում և պտղաբերել. այս սորտը շատ բերքատու յեւ և 4-րդ տարում մեկ բույսից կարելի յեւ ստանալ մինչև 100 պտուզ: Մեյերի կիտրոնն աչքի յեւ ընկնում իր դանազ աճեցողությամբ. փշեր համարյա չունի, պտուղները խոշոր են՝ կլորավուն ձևի. իր հոտով նման է նարնջին. պտուզը դեղնառնարնջազույն է:



Նկ. 2. Ալյերի կիտրոն

Վորագես սենեկային կուլտուրա, այս սորտն արժանի յէ
մեծ ուշադրության:

Կոմյուն (իտալական փոփոխակ).— Դա ամենատարածված
սորտն և իտալիայում և պտղաբերությամբ ու պտղի վորակով
համարվում է լավագույներից մեկը. տեղեկություններ կան, վոր



Նկ. 3. «Կոմյուն» կիրքոն

տակառներում մշակելու դեպքում յուրաքանչյուր բույսից կարե-
լի յէ ստանալ մինչև 150 պտուզ:

Այդ սորտը պտղաբերում է ամբողջ տարին. պտուղները
խոշոր են և տոսնց սերմի. կեղել միջակ հաստության և, թե-
թևիակի խորտութորու և շատ հոտավետ. հյութը թթու յէ: Սե-

Նյակի պայմաններում այդ սորտը փորձարկված չէ, բայց արժանի չե մեծ ուշադրության:

Տաճկական կիրուն.— Աղբը ջանի Հաքիմ Բաբա Մամեղովը և մյուս շրջանների սիրողների փորձից յերեսում է, վոր սա լավ սորտերից մեկն է։ Տաճկական կիտրոնի պտուղները միջակ մեծության են՝ առանց սերմի, կամ քիչ քանակությամբ սերմով և լավ արտաքին տեսքով։

Անդրկովկասում շատ տարածված են տաճկական և նորագույն կիտրոնի սորտերը։

ՍԵՆՅԱԿՈՒՄ ԲՈՒՅՍՈՒՐՆ Ի՞ՆՉՊԵՍ ԴԱՍԱՎՈՐԵԼ

Բույսերը սենյակում դասավորելու ժամանակ անհրաժեշտ են սախեառաջ հիշել, վոր ցիտրուսային կուլտուրաները, ինչպես և մյուս բոլոր բույսերը, մեծ կարիք են զգում լույսի և ողի։ Այդ հանգամանքը յերբեք չպետք է մոռանալ։ Սենյակում բույսի համար ամառը և աշնանն ամենալավ տեղը պատուհանի ներքնատախտակներն են, կամ պատուհանի մոտ դրած հատուկ փոքրիկ սեղանները։

Շատ սիրողներ՝ հաշվի առնելով կիտրոնի ջերմասիրությունը, աշխատում են այն դնել ամենատաք տեղը. այդպես յերբեք չի կարելի անել։ Բույսերը պետք են այնպես դասավորել, վոր նրանք գտնվեն սենյակի միջին ջերմաստիճանի պայմաններում։ Դրա համար աշնանը, յերբ մոտենում է սառնամանիքների վտանգը և լուսամուտները փակվում են, բույսերը պատուհաններից պետք են վերցնել և դնել հատուկ սեղանների կամ աթոռների վրա՝ պատուհանների մոտ։ Զմեռված ընթացքում, կենտրոնական շեզեզեռուցում ունեցող տներում, ուր մարտկոցները տեղավորված են պատուհանների տակ, բույսերը պետք են պատուհաններից հեռացնել։ Հոլանդական վառարաններ ունեցող սենյակներում նույնպես բույսերը պետք են վառարաններից հեռու դնել։

Զպետք են վախենալ ձմեռն ողափոխություն կատարել այն սենյակներում, վորտեղ գտնվում են բույսերը։ Ոգտակար են ամեն որ պատուհանի ողանցքը 15—20 ըսպեցով բաց անել։ Սակայն պետք են հետեւ, վոր ցուրտ ողն անմիջականորեն չազդի բույսի վրա։ Վաղ դարնանը, արեւոտ որեւ սկսելուն պես և ցրտահարության վտանգն անցնելուց հետո, բույսերը նորից դասավորվում են պատուհաններում։ Ամառը հանձնարարվում է կիտրոնները սենյակից գուրս ըերեւ և դնել քամիներից պաշտպանված տեղեւ։

Սենյակում, ձմեռվա ընթացքում, բույսերը վարժվում են անյակի պայմաններին (ջերմության, ողին), վորոնք զգալի չափով տարբերվում են բացոթյա պայմաններից. Նրանք ավելի քնքուշ և զգայուն են դառնում արտաքին պայմանների փոփոխությանը, մանավանդ ջերմության, ողի և արևի ազդեցությանը. ուստի այն պատուհանները, վորտեղ գտնվում են բույսերը, պետք ե բաց անել մեծ զգուշությամբ: Վոչ մի դեպքում չի կարելի պատուհանները բաց անել միանգամից՝ յերկար ժամանակով: Առաջին որերը պետք ե բաց անել կես ժամով և մի ժամից վոչ ավելի, իսկ հետագա որերը հետզհետեւ ավելացնել այդ ժամանակամիջոցը: Սովորաբար 6–8 որ բավական ե, վորպեսզի բույսերը վարժվեն թարմ ողին: Յեթե պատուհանները բացելու ժամանակ նկատվի, վոր բույսերն սկսում են խեղճանալ (տերևները թառամում, կախ են ընկնում), անհրաժեշտ է պատուհաններն անմիջապես փակել: Սենյակում բույսերը մի քանի որ պահում են ծածկված պատուհաններով այնքան ժամանակ, մինչև վոր թառամելու նշանները վերանում են (յերբ տերևներն ավելի ճկունանում և ընդունում են նախկին դիրքը): Դրանից հետո նորից կարելի յե սկսել բույսը վարժեցնել թարմ ողին, բայց անհրաժեշտ և այդ անել զգուշորեն, ավելի քան առաջին անգամ սկզբնական շրջանում պատուհանները բացելով վոչ թե կես ժամով, այլ 15 րոպեյով՝ հետզհետեւ ավելացնելով այդ ժամանակամիջոցը, բայց վոչ այնպես արագ, ինչպես սովորաբար արվում ե:

ԱՄԱՌԸ ԲԱՑՈԹՅԱ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԲՈՒՅՍԵՐՆ ԻՆՉՊԵՍ ՊԱՀԵԼ

Առանց նախազգուշական միջոցների կիրառման, բույսերը անամերձ պարտեզ, կամ վորեն բաց տեղ գուրս քերել նույնազետ չի կարելի: Այն տեղը, վորածեղ բույսերը դրվելու յեն, անզայման պետք ե պաշտպանված լինի ուժեղ քամիներից: Բույսերը բացոթյա պայմաններին և ուղղակի արևի լույսի աղղեցությանն անհջամկետ և վարժեցնել աստիճանաբար, հակառակ պարագայում տերևների ուժեղ այրվածքներ կարող են տեղի ունենալ, իսկ վորոշ զեպքերում՝ նույնիսկ բույսերի վոչնչացում: Սկզբում բույսերը պետք ե դնել կիսաստվերում: Յեթե ստվերու տեղ չկա, կարելի յե այդպիսին պարագայութեա դրա համար հարկավոր և հողի մեջ 3—4 ցից խրել և նբանց վրա փռել վորեն կտոր: 4—6

որ հետո բույսերը կարելի յե դնել ավելի բաց տեղ՝ առաջին որը մոտավորապես մեկ ժամով, իսկ յերկու—յերեք որից հետո այդ ժամանակամիջոցն ավելացնել մեկ և մեկուկես ժամով։ Յերբ բույսի դրսի պայմաններում պահելու տևողությունը կհասնի 6—8 ժամի, այն ժամանակ արդեն նրանց կարելի յե թողնել արեկի տակ ամրողջ որով։ Նույնպես պետք ե նշել, վոր բույսերը քարաշն շենքերի պատերին շատ մոտ չի կարելի դնել. այդպիսի պատերն որվա ընթացքում խիստ տաքանում են, վորից բույսերը կարող են տուժել։ Վերը թված նախաղգուշական միջոցները չկիրառելու հետևանքով վորոշ սիրողների պրակտիկ կյանքում շատ հաճախ լինում են այրվածների և նույնիսկ բույսերի վոչնչացման դեպքեր։ Շատ սիրողների մեջ ստեղծվել ե այն կարծիքը՝ վոր սենյակում աճեցվող ցիտրուսները վախենում են արեից։ Նման կարծիքը միանդամայն սխալ է. ընդհակառակը, ցիտրուսային բույսերն արև սիրում են, վորովհետեւ նրանք տաք յերեք բույսեր են։

Գարնանը բույսերը գիշերները պետք ե ներս տանել այնքան ժամանակ, մինչև վոր գիշերային տաքության ջերմաստիճանը 12—14 աստ. պակաս չլինի։ Ամրողջ ամառվա ընթացքում բույսերը գիշեր ու ցերեկ կարելի յե թողնել դուրսը։ Աշնանը, յերբ գիշերային ջերմությունը 12—14 աստիճանից կսկսի իջնել, գիշերները պետք ե բույսերը ներս տանել, իսկ յերբ ցերեկվա տաքությունը 10—12 աստիճանից ավելի կիջնի, այդ դեպքում բույսերն այլևս դուրսը թողնել չի կարելի։


Յեթե լեռնային և կենտրոնական շրջանների պայմաններում ցիտրուսային բույսերը յերկար ժամանակ պահպին դուրսը՝ 10 աստիճանից ցածր ջերմության տակ, կարող են տերևները թափել, վորը և վատ կանդրադառնա բույսի հետագա զարգացման վրա։

Այն շենքերում, վորտեղ ձմեռելու յեն ցիտրուսները, ջերմաստիճանը 0-ից չպետք ե իջնի, և ջերմաստիճանը բարձրանա 14—15-ից ավելի։

Ձմեռը պահելու համար լավագույն ջերմաստիճանը 8—10° է։ Այդպիսի պայմաններ կարելի յե ստեղծել միայն լուսավոր, չառքացվող միջանցքում կամ ապակեծածկ պատշգամբում։ Պետք ե նկտուի ունենալ, վոր բույսի վրա խիստ վատ են աղջում ջերմաստիճանի սուր տատանումները։

ՅԵՏՐՈՒՍԱՅԻՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՆԵԿԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԻՆՎԵՆՏԱՐԸ ՅԵՎ ԱՄԱՆԵՂԵՆԸ

Ցիտրուսային բույսերի սենեկային մշակության համար անհրաժեշտ ինվենտարը հետվյալն են՝ 1) ցնցուղ, 2) պուլվերիզատոր, 3) այգու մկրատ, 4) այգու դանակ:




Նկ. 4. Ցնցուղ

Բույսերը սրսկելու համար պետք է ոգտագործել պուլվերիզատորներ, վորոնք ավելի հարմար են։ Պուլվերիզատորները պործադրվում են նաև մխասատուների գեմ պայքարելու ժամանակ՝ թունավոր նյութեր սրսկելու համար։ Վերջին դեպքում սրսկելուց հետո պետք է նրանք ջրով լավ մաքրել։

Այգու մկրատները գործ
Են ածում բույսերի հաստ ճյուղերը կտրելու համար, վոր կարելի յէ ձեռք բերել բոլոր յերկաթեղենի խանութներում։

Բույսի ճյուղերը կտրելու համար շատ հաճախ գործ են առաջարկություններ։




Նկ. 5. Այգու մկրատ



Նկ. 6. Այգու դանակ

Ֆում այգու դանակներ։ Ճյուղերն այգու դանակով կտրելը դերադանելի յէ այն պատճառով, վոր ստացվում են ավելի հարթ



կտրվածքներ, վորոնք հեշտ և արագ են առողջանում: Սակայն հաստ ճյուղերը դանակով կտրելը դժվար է, ուստի այդպիսի դեպքերում մկրատն և գործածվում: Մկրատով կտրվածքն անպայման պետք է հարթել այգու դանակով:



Այժմ անցնենք ամանե-

ղենի նկարագրությանը:

Յերիտասարդ բույսերի (մինչև 4—5 տարեկան) համար կարելի է ոգտագործել թրծած սովորական կավե, բայց վոչ գլազուրով պատած ծաղկամաններ: Ավելի մեծահասակ բույսերի համար ծաղկամանները փոխարինում են փայտյա կիսատա-



կառներով: Կիսատակառ-

ները կարող են լինել կլոր—

կառներով քայտեան-

կյունի արկղ

նկ. 7. Կավե ծաղկաման

տակառածե և քառանկյունի—արկղածե: Կիսատակառի ձեռ մեծ նշանակություն չունի: Կարեռը և միայն, վոր նրա ներքենի մասի լայնությունը (հատակում) 4—5 սանտիմետրով պակաս լինի վերեվի մասի լայնությունից: Կիսատակառի բարձրությունը և լայնությունը կախված են բույսի և գլխավորապես արմատների մեծությունից: Վորպես որինակ կարելի յե հանձնարարել ամանի հետեւյալ չափերը.



Բույսերի հասակը

Ամանի յերկարությունը վերին մասում
(սանտիմ.)

Ծանոթություն

| | |
|-------------------|-------|
| Արմատակալած կտրոն | 8 |
| 1 տարեկան | 12 |
| 2—3 տարեկան | 16 |
| 4—6 » | 20 |
| 7—8 » | 24 |
| 9—10 » | 28 |
| 11—15 » | 32 |
| 16—20 » | 36 |
| 20-ից բարձր | 40—50 |

- Ամանի չափը սովորաբար հաշվում են ըստ նրա վերին մասի լայնության:
- Սովորաբար ամանի բարձրությունը հավասար է լինում նրա վերին մասի լայնությանը:



Նկ. 9. Կիսատակառ (կաղկա)

կամանի հողի թթվելուն։ Այդ իսկ պատճառով ել չի հանձնարարվում մետաղյա ամանեղեն գործածել։

Բույսերը նոր կիսատակառների մեջ փոխադրելու ժամանակ պետք է ճետենել, վորպեսզի կիսատակառները պատերին ճեղքեր չունենան, այլապիս ջրելու ժամանակ նրանց արանքներով ջուրը կթափի։

ԿԻՍԱՏԱԿԱՐԱՅԻՆ ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀՈՂ ՊԱՏՐԱՍԵԼԸ

Ցիտրուսային բույսերի կիսատակառային մշակության ժամանակ հատուկ նշանակություն ունի բույսերի սննդի պահովման խնդիրը, ուստի և վճռական նշանակություն ունի հողի կաղմը։ Վոմանք այդ հարցին բավարար ուշադրություն չեն դարձնում ամեն պատահական հող վերցնում են և հետո դարձանում՝ թե ինչու բույսը փչացավ։ Բազմաթիվ դեպքերում սենյակի բույսերը փչանում են սննդի պակասությունից, կամ ջրելու աննորմալ պայմաններից։

Պետք է նկատի ունենալ, վոր կիսատակառային մշակության համար պատրաստի հող համարյա թե չկա, համենայն

կիսատակառներն ավելի լավ ե պատրաստել կաղնու փայտից՝ յերկաթե ողակապերով։ Հատակի մասում պետք է լինի 3—4 հատ վոչ մեծ անցք՝ ավելորդ ջուրը դուրս հոսելու համար։ Ավելորդ ջրի հոսանքը հեշտացնելու, ինչպես նաև դեպի արմատներն ողի աղատ մուտքն ապահովելու համար կիսատակառները պետք է պատրաստել 3—4 վոտիկներով, կամ թե կիսատակառի հատակին խփել 2 ձողիկ, վորպեսզի նրա հատակը չդիպչի սենյակի հատակին, կամ պատուհանի ներքնատախտակին։

Վոչ մի դեպքում չի կարելի ծաղկամանները և կիսատակառները ներկել. դա պակսեցնում է ողի հոսանքը դեպի արմատները և նպաստում ծաղկության չփառացնել։

Վոչ մի դեպքում չի կարելի ծաղկամանները և կիսատակառները ներկել. դա պակսեցնում է ողի հոսանքը դեպի արմատները և նպաստում ծաղկության չփառացնել։

Վոչ մի դեպքում չի կարելի ծաղկամանները և կիսատակառները ներկել. դա պակսեցնում է ողի հոսանքը դեպի արմատները և նպաստում ծաղկության չփառացնել։

դեսլու այդպիսի հող դժվար է դտնել. դրա համար այդպիսի հողը պետք է պատրաստել մի քանի տեսակ հողից խառնուրդ կազմելով, վորպեսզի ստացվի լավ սննդարար հող:

Կիտրոնի կիսատակառային մշակության համար հողի լավագույն կազմը հետևյալն է. մեկ մաս ճմահող, մեկ մաս անտառային բուսահող, մեկ մաս քայքայված գոմաղը, մեկ մաս գետի ավագ: Առանձին դեպքերում (խոշոր բույսերի համար) այդ խառնուրդին կարելի յե ավելացնել խառնաղը հող:

Հողի այդ տեսակների քանակական փոխհարաբերությունը կարելի յե վորոշ չափով փոխել, բայց այս դեպքում պետք է հետեւ, վորպեսզի հողը շատ սղինդ և կալչուն չլինի: Նո պետք է լինի ծակոտկեն և ջրի ու ողի համար միանգամայն թափանցիկ:

Ճմահողն ամենակարենը մասն է: Այն պետք է պատրաստել հետեյալ ձևով. դաշտում ընտրում են մի հողամաս, ցանկալի յե թիթեռնածաղիկ բույսերով զբաղված (առվույտ, յերեքնուկ և այլն): Յեթե հողը պատրաստվելու յե այն ժամանակ, յերբ խոտը բարձր է, խոտը նախապես պետք է հնձել: Ընտրված հողամասից հարկավոր է վերցնել հողի վերին շերտը, 10—15 սմ հաստությամբ և այդ հողը բահով շրջել, վորպեսզի ճիմը լավ քայքայվի: 5—6 որ հետո, յերբ ճիմը մի փոքր կչորանա, պետք է բահով խառնել՝ աշխատելով նրանք մանրացնել, հողն արմատներից թափառ և 15—20 որ հետո այդ հողը կարելի յե ողտագործել:

Վոչ մի դեպքում չի կարելի կիսաքայքայված մանր արմատները դեն զցել, քանի վոր նրանք ճմահողի ամենաարժեքավոր մասն են կազմում:

Անտառային բուսահողը լավ է պատրաստել վաղ դարնանը՝ անտառում (բայց վոչ փշատերև անտառում): Հողը նույնպես պետք է վերցնել բարակ շերտերով, թափված տերենների և կիսաքայքայված մանր ճյուղերի հետ միատեղ: Վորեն բաց տեղ հավաքած հողից պետք է կույտեր կազմել և ամառվա ընթացքում նրանք մի քանի անգամ բահով խառնել: Քայքայման ոլորցեսն ուժեղացնելու համար կույտերը մի քանի անգամ պետք է ջրել: Սովորաբար աշնանն այդ հողն արդեն բավականաչափ պատրաստ է լինում գործածության համար: Անտառային բուսահողը վորոշ չափով հանդիսանում է նաև վորպես պարարտանյութ:

Գոմաղի փտահողը բոլորովին քայքայված գոմաղըն է, վոր սև, պարաբու հողի տեսք է ունենում: Այդ հողը կարելի յե դունել գոմաղը թափած տեղերում: Վերևից թարմ գոմաղը պետք

Ե հեռացնել մինչև այն շերտը, ուր սկսվում է բոլորովին քայլայված միատեսակ, ճարպոտ, յուղոտ մասսան:

Ավելի լավ ե ոգտագործել ձիու քայլայված աղը:

Ավագ.— Անկախ նրանից թե ինչպես ե պատրաստվել հողը, նրան միշտ պետք ե ավազ ավելացնել: Լավ ավաղը գետի ավազն է: Այդ ավաղը գործածելուց առաջ ջրի մեջ պետք ե մի քանի անգամ լվանալ, մանավանդ յեթե նրա մեջ նկատվում են ժանգութեր:

Քաղաքի պայմաններում վերը նկարագրած ձեռվ հող պատրաստելը բավականին դժվար է, ուստի և պատրաստի հող պետք ե ձեռք բերել բուսապատման տրնստներից, ծաղկանոցային տնտեսություններից, ջերմատներից և այլն:

ՑԻՏՐՈՒՍԱՅԻՆ ԲՈՒՅՈՒՄ ԲԱԶՄԱՑՈՒՄԸ

Թե կիտրոնը և թե մյուս ցիտրուսային բույսերը բազմացնում են սերմերով և կտրոններով (այսինքն՝ ճյուղերի մասերով). սենյակի պայմաններում ամենամեծ ուշադրությունը պետք է դարձնել 2-րդ միջոցի, այսինքն՝ կտրոններով բազմացնելու վրա: Սակայն դրա համար պետք է ունենալ պտղաբերող բույսեր, իսկ վոչ մերձարևադարձային շրջաններում այդպիսի բույսեր քիչ կան:

Ուստի առաջին հերթին նկարագրենք ավելի մատչելի՝ սերմերով բազմացման միջոցը:

Բազմացումը սերմերով.— Իրենց տներում կիտրոն աճեցնելու համար բազմացման այս միջոցը կարող են ոգտագործել բոլոր սիրողները՝ առանց բացառության բոլոր շրջաններում. Դրա համար անհրաժեշտ է միայն կիտրոն գնել, նրա սերմերը հանել և ցանել: Սերմերը պետք է զգուշությամբ հանել, վորպեսզի դանակով չկտրվեն, ըստ վորում կիտրոնի միջուկը կարելի յեղանակությունում պահպանվի առաջին համար անպետք են, վոր կիտրոնի՝ թեյի մեջ ողտագործել: Պետք է նկատի ունենալ, վոր կիտրոնի՝ թեյի մեջ ողտագործել: Պետք է նկատի ունենալ, վոր կիտրոնի՝ թեյի մեջ ողտագործել:

Հնտրած սերմերը լավ է ցանել մոտակա 3—4 որվա ընթացքում, վորովհետեւ յերկար պահելու դեպքում, մանավանդ տաք ու չոր տեղում, նրանք նույնպես կկորցնեն իրենց ծլունակությունը:

Սերմերը պետք է ցանել հատուկ ծաղկամանների կամ փոքր արկղների մեջ (նայած սերմի քանակության): Ամանի մեջ պետք է հող լցնեն վորի կաղմը վերը ցույց ե տրված, և նրա մեջ

ցանել մեկ սանտիմետր խորությամբ՝ մեկ սերմը մյուսից 2—3 սմ հեռավորության վրա։ Սերմերը՝ արդեն աճող բույսեր ունեցող ծաղկամանների մեջ, ինչպես ոտ հաճախ կատարվում է, չի կարելի ցանել։ Դա վնաս է թե ծաղկամանի մեջ աճող բույսին, և թե նոր մատաղ ծիլերին, քանի վոր նրանց նկատմամբ հնարավոր չեւ անհրաժեշտ խնամք տանել։ Ծաղկամանի կամ արկղի մեջ ցանած սերմերն անհրաժեշտ են հենց նույն ժամին առատուրեն ջրել, դնել տաք տեղ և հետագայում ջրել ըստ կարիքի։ Առանձնազես պետք է հետևել, վոր հողը չչորանա, բայց չափանց շատ ջրելը նույնպես վտանգավոր է, վորովհետեւ սերմերը կարող են նեխել։

Սերմերի արագ և լավ աճման համար ամենաբարենպաստ ջերմությունը 20—25 աստիճանն է։

Առաջին ծիլերը յերևալուց հետո անհրաժեշտ է ստեղծել այլ պայմաններ, այսինքն՝ ավելի ցածր ջերմաստիճան և ավելի շատ լույս, վորի համար ամենից հարմարը նրանք պատուհաններում տեղավորելն է։

Յեթե աճող ծիլերը շարունակենք թողնել տաք և մութ տեղ, այն ժամանակ նրանք կսկսեն շատ ուժեղ և անհավասար դեպի վեր աճել վորի հետևանքով կստացվեն շատ թույլ, ձգված բույսեր։ Ծիլերի հետագա զարգացման համար արդեն բավական է 13—15 աստ. ջերմությունը։ Այդ ջերմության գեպքում նրանք դդալիորեն դանդաղ կաճեն, բայց դրա փոխարեն կստացվեն ավելի առողջ բույսեր՝ սերմնաբույսեր (սերմից աճեցրած յերիտասարդ բույսերը կոչվում են սերմնաբույսեր)։

Յերբ աճող ծիլերը կունենան առաջին դույր խոկական տերեզները, նրանք հարկավոր են վերատնկել առանձին ամանների մեջ։ Դրա համար պետք է վերցնել ամենափոքր՝ 6—8 սմ չափի (վերի մասի լայնությունը) ծաղկամաններ և յուրաքանչյուր ծաղկամանի մեջ տնկել մեկական սերմնաբույս։

Դա կատարվում է հետեւյալ կերպ։ աջ ձեռքը վերցնելով վերևե սրածայր փայտ կամ դանակ՝ սերմանաբույսի մոտ խրում են հողի մեջ և զգուշությամբ բարձրացնում այն։ Այդ նույն ժամանակ ձախ ձեռքով բռնելով՝ բույսն զգուշությամբ հանում են հողից։ Ծաղկամանի մեջ տնկելուց առաջ, սերմնաբույսի արմատը յեղունկով մի քիչ պետք է կարճացնել։ Այդ արվում է նրա համար, վոր հետագայում ստացվեն ավելի լավ զարգացած փնջածեարմատներ։

Սերմնաբույսը հողի մեջ տնկելու ժամանակ ձախ ձեռքով
պետք է պահել այնպիսի բարձրության վրա, վոր նա տնկվի
 $\frac{1}{2}$ —1 սմ ավելի խորը, քան յեղել և իր տեղում, իսկ աջ ձեռքով
հողը նստեցնել արմատներին։ Ծաղկամանի մեջ հողը մինչև բե-
րանը չի կարելի լցնել, պետք է մի քիչ տեղ թողնել (մոտավո-
րապես 1— $\frac{1}{2}$ սմ)՝ ջրելու համար։ Յերբ սերմնաբույսը ծաղկա-
մանի մեջ կդրվի և հող կլցվի, անհրաժեշտ և ծաղկամանի յեղու-
րի հողը քիչ նոտեցնել—պնդացնել Տնկելուց հետո սերմնաբույ-
սերն անմիջապես պետք է լավ ջրել և դնել ավելի տաք ու լու-
սավոր տեղ, վորպեսզի նրանք արմատակալեն։

Սերմնաբույսերի հետագա խնամքը պետք է լինի պարբե-
րաբար ջրել և ըստ աճման չափի վերատնկել ավելի մեծ ծաղ-
կամանների մեջ։

Սերմերից աճեցրած կիտրոնները շատ յերկար ժամանակ
չեն պտղաբերում՝ յերբեմն մինչև 10—12 տարեկան հասակը։
Բացի դրանից, վստահություն չկա, վոր այդ բույսերը լավ վորա-
կի պտուղներ կտան։ Շուտ բերք ստանալու և լավ վորակի պտուղ
ստանալու համար անհրաժեշտ է պատվաստել։

Պատվաստած սերմնաբույսերը պատվաստից 2—3 տարի
հետո արդեն սկսում են պտղաբերել։

Պատվաստի ձեւեր շատ կան, սակայն նրանք բոլորը կարելի
յե բաժանել յերկու խմբի. 1) պատվաստ մեկ բողբողջով (աչքով),
կամ, ինչպես անվանում են՝ աչքապատվաստ և 2) պատվաստ՝
կտրոնով կամ կտրոնապատվաստ (մատապատվաստ)։

Մենք կսահմանափակվենք ամենատարածված և պարզ մի-
ջոցի՝ աչքով պատվաստի կամ աչքապատվաստի նկարագրու-
թյամբ։ Այս ձեւն այնքան հեշտ է, վոր ցանկության դեպքում
յուրաքանչյուր սիրող շատ շուտով կարող է տիրապետել դրան։

Նախեառաջ պետք է վորոշել թե աչքապատվաստի համար
աչքեր *). ունեցող կտրոններ վորտեղից վերցնել։

Կտրոնը պետք է վերցնել լավ սորտի պտղաբերող կիտրոնի
բույսից։

Յեթե ծանոթների մոտ այդ նպատակի համար համապա-

*) Այդեղործության մեջ աչքապատվաստի համար պատրաստած ճյուղը
յուր բողբոջներով—աչքերով կոչվում է կտրոն։ Աչքեր կոչվում են այն բող-
բոջները, վորոնք դանվում են տերեակոթի մոտ։

տասխան բույս չգտնվի, ապա կտրոնները պետք ե ստանալ կամ դուրս գրել կիտրոնի մշակությամբ և բազմացմամբ զբաղվող հատուկ պետական տնտեսություններից (Գոսսորտֆոնդ, Բուսապատման տրեստ և այլն):

Աչքապատված կատարվում ե այն ժամանակ, յերբ սերմնաբույսի ցողունի ներքեսի մասը կլինի սովորական մատիտի հաստության կամ մի քիչ ավելի, այսինքն՝ մոտավորապես 8—10 միլիմետր տրամագծով:

Աչքապատվաստը սովորաբար կատարվում ե վաղ գարնանը կամ ամռան շրջանունի կիսին: Գարնան աչքապատվաստի ժամանակ շչքը (բողբոջը) նույն տարին աճում—շիվ ե գցում, դրա համար ել այս ձեւը կոչվում ե «աճող» աչքով աչքապատվաստ:

Ամռան աչքապատվաստի ժամանակ շիվը զարգանում ե մյուս տարին, ուստի այս ձեւը կոչվում ե «քնող» աչքով աչքապատվաստ:

Աչքապատվաստի հաջողության դիմավոր պայմանը սերմնաբույսի կեղեսի լավ անջատումն է: Սովորաբար կեղեսը լավ ե անջատվում գարնանը՝ ապրիլ մայիս և ամռանը՝ ոգոստոս ամիսներին: Պետք ե ասել վոր ընդհանրապես աչքապատվաստ հնարավոր ե կատարել ամբողջ տարվա ընթացքում, միայն թե կեղեւը լավ անջատվի:

Աչքապատվաստի համար կտրոն մթերելու ժամանակ պետք ե հաշվի առնել, վոր շիվերի վրա աչքերը հավասարաթեք չեն. աչքապատվաստի մոմենտին շիվի վերին մասում նրանք հասունացած չեն լինում, իսկ ցածրի մասում սովորաբար թույլ են նկ. 10. Աչքապատվաստի կտրոններ զարգացած լինում: Ուստի և պատվաստի համար պետք ե վերցնել պատվաստաշիլի—կտրոնի մասի աչքերը:

Կտրած շիլի տերենները հենց նույն ժամին պետք ե հեռացնել այնպես, վոր մնան միմիայն տերենակոթունները: Պետք ե կտրել նաև կտրոնի վերին և ներքեսի ծայրերը:



Այդ ձեռվ ստացած կտրոնը մինչև աչքապատվաստ կատարելը բացոթյա թողնել չի կարելի. այն պետք է դնել ջրով լցրած բաժակի մեջ կամ թե պահել խոնավ շորում:

Աչքապատվաստի տեխնիկան հետևյալն է. նախեառաջ ցողունի վրա պետք է ընտրել աչքապատվաստի տեղը Այդ տեղը սովորաբար պետք է լինի հողի մակերեսից 3—5 ոմ բարձրության վրա: Պատվաստի տեղը պետք է թաց շորով մաքրել՝ ցողունին կպած հողի հատիկներն ու կեղտը հեռացնելու համար:



Նկ. 11. Դ ձեփ կտրվածք, աչք հանելը, աչք դնելը, կապելը

Ապա աչքապատվաստի սուր դանակով ցողունի կեղևի վրա ներքեց գեղի վեր ըստ յերկարության մոտ 2—2,5 ոմ մեծությամբ կտրվածք պետք է անել: Կտրվածքը խորը չպետք է լինի, այլ միմիայն կեղևի հաստության չափ. ապա կտրվածքի վրա ըստ յերկարության մոտ 1 ոմ չափ հորիզոնական կտրվածք է արվում, այնպես, վոր յերկու կտրվածքները միասին ոռւսական Դ տառի ձևունենանց կտրվածքը դանակի վոսկը ծայրով հարկավոր է զգուշությամբ բաց անել և հետեւ, վորպեսզի բնափայտը չվիրավորվի և ձեղքվածքի կեղևը չպատովի: Հենց այս տեղ տեղնուտեղը աչքը կտրոնից պետք է հանել: Աչքը կտրելու համար պետք է սկսել աչքից մեկ ոմ վեր և աչքը բնափայտի փոքրիկ կտորի հետ միասին զգուշությամբ կտրել ու հանել: Այդ ձեռվ հանած աչքը ձախ ձեռի յերկու մատով հարկավոր երոնել տերեակոթունից և զգուշությամբ տեղափորել բացված ձեղքվածքի կեղևի տակ:

Աչքը կեղևի տակ տեղափորելուց հետո պետք է ճլոպով ամուր կապել. զրա համար անհրաժեշտ և վերցնել ճլոպի հավասար և ամուր կտոր ու ամբողջ վերքն ամուր փաթաթել այնպես, վոր աչքն ինքն ազատ մնա, վորովհետեւ նրանից և աճելու շիվը:



Նկ. 12. Աչքապատվաստից վեր—կտրելու անգը

Աչքապատվաստի հաջողությունը կախված է աշխատանքի արագությունից և վորակից, ուստի նախքան կիտրոնի աչքապատվաստին ձեռնարկելն անհրաժեշտ է վարժվել վորեւ այլ բույսի վրա (ուոի և այլն):

10—15 որ հետո հարկավոր է պարզել՝ պատվաստը կալել և, թե վոչ, Յեթե պատվաստած աչքի վրա թողած տերևակոթունին մատով թեթև դիպչելիս հեշտությամբ ընկնում է, նշանակում է պատվաստը կալել և: Իսկ յեթե տերևակոթունը չորացել է և մատով դիպչելիս չի ընկնում, նշանակում է աչքը չի կալել և պատվաստը պիտի կրկնել: Կրկնվող պատվաստը կատարվում է առաջին անգամ կատարված պատվաստից քիչ վեր, կամ ավելի լավ և ներքեւ: Յերկրորդ անգամ պատվաստը կարելի յե կատարել նույն բարձրության վրա, բայց սերմնաբույսի հակառակ կողմից:

Բոնած աչքապատվաստների կապերը 10—15 որ հետո անհրաժեշտ է թուլացնել և 20—25 որ հետո՝ բոլորովին վերցնել:

Յերբ պատվաստած աչքը 6—8 սմ յերկարությամբ շիվ կտա, պատվաստած սերմնաբույսի աչքից վեր գտնվող մասն ամրողջովին պիտի կտրել և հեռացնել: Կտրվածքը պետք է ծածկել այգու մածիկով կամ մոմով: Դրանից հետո պատվաստած աչքն սկսում է շատ արագ աճել և մեկ կամ յերկու տարի անցնելուց հետո կտրվածքի վոչ մի հետք չի մնում:

Վորպեսզի աչքից ղարզացող շիվը դեպի վեր ուղիղ աճի, հարկավոր և այն կապել հողի մեջ բույսին մոտ տնկած ցցին:

Պատվաստված բույսի հետագա խնամքը կայանում է ձեռվորման, ետի և աճին համեմատ պարբերաբար վերատնկման, ինչպիս նաև վնասատուների դեմ պայքարելու մեջ:

Այդ բոլորի մասին մենք կանդրադառնանք հետագայում՝ համապատասխան գլուխներում:

Աչքապատվաստ կարելի յե կատարել վոչ միայն կիտրոնի, այլև նարնջի, ցիտրոնի և ցիտրուսային այլ բույսերի վրա և ընդհանրապես բոլոր պտղատու ծառերի տեսակների վրա:

ՔԱԶՄԱՑՈՒՄԸ ԿՑՐՈՆՆԵՐՈՎ

Կիտրոնի և մյուս ցիտրուսային բույսերի՝ կտրոններով բազմացումը նախորդից ավելի պարզ է և ամենուրեք արժանի յե ամենալայն տարածման, մանավանդ այն վայրերում, վորտեղ կան մեծահասակ պտղաբերող բույսեր:

Մայրացու բույսը (այն բույսը, վորից կտրոններ են վերցնում) պետք ե բոլորովին առողջ և անպայման պտղաբերող լինի:

Առաջի պահանջը, բույսերի միանգամայն առողջ լինելու մասին, բղխում և նրանից, վոր մայրացու բույսի բոլոր հիվանդությունները փոխանցվում են կտրոններից աճեցվող նոր բույսերին:

Յերկրորդ պահանջը, վորպեսզի բույսերը պտղաբերող լինեն, բղխում և պտուղների վորակի ստուգման անհրաժեշտությունից, հակառակ պարագայում կրազմացվի վատ վորակի սորտը:

Կտրոնի միջոցով կարելի յե բազմացնել ցիտրուսային բույսերի (մանավանդ կիտրոնի) համարյա բոլոր մասերը՝ յերիտասարդ շիվերը, միամյա և յերկամյա ճյուղերը, ճյուղերի մասերը և նույնիսկ առանձին բողբոջներ ունեցող տերևները։ Սակայն ավելի հին ճյուղերի արմատակալման համար, սկսած յերկամյա ճյուղերից, պահանջվում են հատուկ պայմաններ:

Սենեկային պայմաններում, տունց հատուկ հարմարությունների, յերիտասարդ՝ այսպես կոչված՝ կանաչ շիվերը (տվյալ սեղոնում զարդացածները) ավելի հեշտ են արմատակալում։ Միամյա ճյուղերը (նախորդ տարին զարդացածները) ավելի ուշ և դժվար են արմատակալում։ Գործնականում սովորաբար ոգտագործում են կանաչ՝ բնափայտը դեռևս չհասունանած շիվերը։ Այդպիսի շվերը շատ թե քիչ ճկուն են լինում (հեշտ են կռանում):

Կտրոններով բազմացնելու տեխնիկան շատ պարզ է։ Այն մայրացու բույսից, վորն ուղում են բազմացնել, հարկավոր ե սուր դանակով, խնամքով համապատասխան ճյուղ կտրել և այնուհետև կտրտել 8—10 ամ յերկարության կտրոնների։ Կտրոնի յերկարությունը կախված է լինելու միջնադույցների մեծությունից, այսինքն՝ աչքերի մեջ յեղած տարածությունից։ ուստի և լավ ե հաշվել վոչ թե սանտիմետրներով, այլ աչքերի քանակով։ Կտրոնի համար բավական է 4—5 աչքը, յերբեմն նույնիսկ 3-ը։ Արմատակալման համար նախատեսված կտրոնները համապատասխան ճեղված պետք ե պատրաստել, այսինքն՝ յուրաքանչյուր կտրոնի վրա յեղած տերևների մակերեսը պետք ե պակսեցնել յերկու անգամ, կամ տերևների կեսը հեռացնել, կամ յուրաքանչյուր տերեկը կիսով չափ կտրել։ Բոլոր տերևներն ամրողջովին հեռացնել, ինչպես հաճախ կատարվում է, չի թույլատրվում։ Կտրոնը վերելից պետք ե կտրել անմիջապես բողբոջի վերից, իսկ ներքեմց՝ բողբոջի տակից, բայց վոչ յերբեք միջնադույցային տարածությունների մեջտեղից։ Կտրվածքը պետք ե լինի միանգամայն հարթ և յաղբերին շվի կեղեւ թելեր բոլորովին չպետք ե նկատվեն։

Կտրոնի կտրվածքները վոչ մի մածիկով չպետք է ծածկել, եսկ փտումի վտանգը կանխելու համար ներքեի կտրվածքին կարելի յե փայտածուխի ծեծած վոշի ցանել: Այդ ձևով պատրաստած կտրոնը տնկում են արմատակալման համար:

Կտրոններ տնկելու լավագույն ժամանակը համարվում է գարունը՝ ապրիլ, մայիս ամիսները: Սակայն Պավլովով քաղաքի սիրողների որինակով կտրոնը կարելի յե տնկել համարյա ամբողջ տարվա ընթացքում:

Կտրոնները կարող են արմատակալել սովորական արկղի մեջ՝ խոնավ ավագում: Բայց կտրոնների վրա արմատներ յերեւալուց հետո անհրաժեշտ է նրանք վերատնկել հողով լցված ծաղկամանի մեջ, վորովհետեւ ավազի մեջ սննդաբար նյութեր ըռլորովին չկան:


Պավլովով քաղաքում կիրառում են կտրոնների՝ անմիջապես հենց հողով լցված ծաղկամանի մեջ արմատակալման յեղանակը: Այս դեպքում ամբողջ տարվա ընթացքում վոչ մի վերատնկում չի պահանջվում: Դրա համար պետք է վերցնել 12 սմ մեծություն ունեցող ծաղկաման (վերին լայնքը) և լավ յեռացնել այն (տխտահանել):

Ծաղկամանի հատակում պետք է դրենաժ պատրաստել, վորապեսզի ջրելու ժամանակ ավելորդ ջրերը դուրս հոսեն և ողի մուտքը հեշտացվի: Դրենաժը կատարվում է այսպես. ծաղկամանի հատակում անցք է արվում (յեթե դա չկա) և ծածկվում է խեցիի կտրով (կոտրած ծաղկամանի փոքր կտոր): ուսուցիկ մասով դեպի վեր: Ապա նրա վրա լցնում են մի շերտ մանր քար կամ սիսեռի մեծությամբ փայտածուխ: Դրենաժային այդ շերտի հաստությունը ծաղկամանի բարձրության մեկ քառորդից ավելի չպետք է լինի: Դրենաժային շերտի վրա պետք է փռել ախտահանված (յեռացրած) մամոի 1 սմ հաստության շերտ, այնուհետեւ ծաղկամանը՝ պատրաստած հողով պետք է լցնել մինչև բերանը:


Պատրաստած կտրոնը պետք է տնկել ծաղկամանի միջին մասում՝ 4—5 սմ խորությամբ (այս դեպքում կտրոնի վրա հողի մակերեսից վերև պետք է մնա տերեների հետ միասին 2—3 աշբեց վոչ պակաս: Տնկած կտրոնն անհրաժեշտ է ջրել և ծածկել սովորական բաժակով, կամ ապակյա բանկայով: Յեթե կտրոն-

ների թիվը շատ է, ծաղկամանի փոխարեն կարելի յե հարմարեցնել արկղ։ Կտրոնները տնկելուց հետո հարկավոր ե արկղը ծածկել ապակիով։

Կտրոնների հաջող արմատակալման համար անհրաժեշտ ե բավականաչափ խոնավություն և ջերմություն։ Դրան կարելի յե հասնել հաճախակի ջրելով և գոլորշիացումը պակսեցնելով, ուստի կտրոնները պետք ե ծածկել բաժակով, վորը նաև ջերմոցի դեր ե կատարում և պահպանում են հողի ջերմությունը։ Արմատակալման լավագույն տարօւթյունը $20-25^{\circ}$ ջերմաստիճանն է։ Ավելի ցածր ջերմաստիճանի դեպքում անմատակալումը դանդաղում է, իսկ $10-12^{\circ}$ -ի դեպքում կտրոնները սովորաբար բռնորովին չեն արմատակալում և փչանում են (նեխում են)։ Զերմության և խոնավության այդպիսի պայմաններում կտրոնը պետք ե մնա



Նկ. 13. Կտրոնի արմատակալման համար պատրաստած ծաղկաման



Նկ. 14. Արմատակալած կտրոն

մինչև նրա լրիվ արմատակալումը։ Արմատակալման արտաքին նշաններ կարող են ծառայել կտրոնի վրա նոր տերևների զարգացումը։

Հենց վոր կտրոնը լրիվ կարմատակալի, ծածկոցը (բաժակը, բանկան, ապակին) հարկավոր ե վերցնել։

Սակայն ծածկոցը միանգամից չպետք ե վերցնել։ Անհրաժեշտ ե յերիտասարդ բույսն աստիճանաբար վարժեցնել թարմողին։ Դրա համար ծածկոցը պիտի հետզհետե բարձրացնել՝ սկըզբում կիսով չափ, հետո որական կես ժամով վերցնել, այնուհետեւ՝

մեկ ժամով և այլն, իսկ 3—4 որ հետո բոլորովին վերցնել։ Լավ արմատակալման համար պահանջվում է 20—25 որ։

Յեթե կտրոնները տնկվել են ավագի մեջ, 20—25 որ հետո նրանք պետք ե վերատնկել ծաղկամանների մեջ։ Իսկ յեթե կտրոնները միանգամից տնկվել են ծաղկամանի մեջ, ապա տարփա ընթացքում վոչ մի վերատնկում չի պահանջվում։

Արմատակալած կտրոնների վերատնկման ժամանակ առանձնապես պետք ե հետևել, վոր յերիտասարդ, քնքուշ, նոր կաղմակերպված արմատները չվնասվեն։

Արմատակալած կտրոնները վերատնկում են նույն ձևով, ինչպես սերմնաբույսերը։

Կտրոններից աճեցրած բույսերն այլևս պատվաստի կարիք չունեն։ Նրանք՝ արմատակալելուց հետո՝ սկսում են պտղաբերել յերկրորդ կամ, ծայրահեղ դեպքում, յերրորդ տարին։

Այս միջոցն իր պարզության շնորհիվ արժանի յե ամենալայն գործադրման՝ Խորհրդային Միության բոլոր շրջաններում։

ԲՈՒՅՍԵՐԻ ՏՆԿՈՒՄԸ ԾԱՂԿԱՄԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԿԻՍԱՏԱԿԱՌՆԵՐԻ ՄԵՋ

Ցիտրուսային բույսերը տնկելու ժամանակ նախեառաջ անհրաժեշտ ե ընտրել համապատասխան տեսակի աման (ծաղկաման կամ կիսատակառ)։ Այս դեպքում ամանի մեծությունը, ինչպես վերն ասվեց, ամբողջովին կախված ե բույսի ուժեղությունը և զարգացման աստիճանից։ Վոմանք կարծում են՝ ինչքան մեծ լինի ծաղկամանը կամ կիսատակառը, այնքան բույսը լավ կզարդանա։ Դա բոլորովին սխալ կարծիք եւ Այդպիսի պայմաններում շատ դժվար ե կանոնավորել բույսի աճեցողությունը, և հաճախ շատ ուժեղ աճեցողության հետեւանքով պտղաբերումը ձգձգվում ե մի քանի տարով։ Ամանը պետք ե վերցնել այնպիսի մեծության, վոր բույսի արմատները միանգամայն ազատ տեղավորվեն նրա մեջ։ Տնկելու ժամանակ արմատների և ամանի պատերի նորմալ հեռավորություն կարելի յե թողնել 2—4 սմ (նայած բույսի չափին)։ Տնկելուց առաջ ծաղկամանի կամ կիսատակառի մեջ պետք ե դրենաժ անել, ինչպես դա նշված է կտրոնների համար։ Դրենաժային շերտի հաստությունը կախված է կիսատակառի խորությունից և տնկվող բույսի արմատային սիստեմի յերկարությունից։ Սովորաբար այդ շերտը պատրաստ-

վուճ և 2—4 տմ հաստությամբ։ Տնկելուց առաջ դրենաժային շերտի վրա պետք է քիչ հող լցնել, վոր արմատներն անմիջականութեն չշփվեն դրենաժային շերտի հետ։ Անհրաժեշտ է խնամքով ստուգել բույսերի արմատները և բոլոր մնացած վայրերը (փուած, ջարդված) մասերը հեռացնել, վորից հետո արմատային սիստեմն ընկդմել կավի լուծույթի կամ ջրի մեջ, և ապա անցնել տնկելու գործին։

Տնկելու ժամանակ պետք է հետևել վոր բույսը տեղավորվի



Նկ. 15. Կորոնի տնկելը. Ա—սխալ (խոր), Բ—ուղիղ

ծաղկամանի կամ կիսատակառի ուղիղ մեջտեղը, և վորպեսզի արմատները հավասարապես փռված լինեն։ Պետք է բույսը տնկել այնպես, վոր արմատավզիկը (այն տեղը, ուր արմատը բաժանվում է ցողունից) հողի մակերեսին հավասար լինի։ Ծաղկամանի մեջ արմատներն զգուշորեն և հավասարապես փռելուց հետո, սրանց վրա հետզհետեւ պետք է հող լցնել, և միաժամանակ լցրած հողն զգուշությամբ այնպես նստեցնել, վոր աքմատները չմնավին։

Ծաղկամանի կամ կիսատակառի մեջ հողը մինչև բերանը չպետք է լցնել, այլ մի քիչ՝ մոտ 2—3 ոմ ազատ տեղ թողնել՝ ջրելու համար:

Տնկելուց անմիջապես հետո բույսն առատորեն պետք է այնքան ջրել, մինչև վոր ծաղկամանի հատակի անցքով ջուրը կսկսի դուրս հոսել: Յեթե տնկելու ժամանակ այս կամ այն պատճառով արմատները խիստ կտրտված են յեղել, անհրաժեշտ ե թեթևակի կտրել նաև ցողունի վերին մասերը: Սովորաբար, տնկելու ժամանակ, ուժեղ աճեցողություն ունեցող շվերը պետք է կտրել նրա յերկարության կեսի չափ, իսկ թույլ շվերը բոլորովին հեռացնել: Բայց յեթե տնկելու ժամանակ արմատները չեն կտրվել, կարելի յե ցողունին և ձեռք չտալ:

Նոր տնկած բույսերը՝ մինչև նրանց լրիվ արմատակալումը՝ պետք է պահել ստվերում: Նորմալ պայմաններում արմատակալումը տեղի յե ունենում 3—4 շաբաթվա ընթացքում:

ԲՈՒՅՍԵՐԻ ՎԵՐԱՏՆԿՈՒՄԸ

Բույսի աճման հետ միաժամանակ արմատային սիստեմն այնքան է մեծանում, վոր ծաղկամանը կամ կիսատակառը նրա համար նեղվածք է դառնում: Այս դեպքում բույսն սկսում է հիմանդանալ և յեթե հիվանդության պատճառները չվերացվեն, նա կարող է բոլորովին վոչնչանալ: Ուստի բույսերի վերաբնկումը նրանց նորմալ զարգացման անհրաժեշտ պայմանն եւ:

Յերիտասարդ բույսերի վերատնկման անհրաժեշտության դեպքում պետք է կատարել, այսպես կոչված՝ վերացում, ըստ վորում արմատային սիստեմը և հողի գունդը բոլորովին չեն խախտվում: Վերացում կատարվում է նաև առաջուց տնկվածն ուղելու համար (խորը կամ սաղը): Սենյակի պայմաններում դա կարելի յե կատարել տարվա բոլոր յեղանակներին:

Վերաշրջումը կատարվում է հետևյալ ձևով. ամբողջ ծաղկամանը շրջվում է հատակով դեպի վեր և թեթևակի ծեծելով ծաղկամանի պատերին ու հատակին, կամ ծաղկամանի յեղբերին, ապա խփելով սեղանին, հանվում է նրա ամբողջ գունդը: Այս ժամանակ գունդը ձեռքով պիտի պահել, վորպեսզի հողը չցըվի: Ծաղկամանից այս ձեռվ հանած բույսը, առանց գունդը քանդելու, պետք է տեղափորել ավելի մեծ ամանի մեջ:

Խոշոր բույսերի վերաշրջումը, մանավանդ 25—30 ոմ լայնություն ունեցող կիսատակառներից, ավելի դժվար եւ Այս դեպքում գունդը հանելուց առաջ անհրաժեշտ է հողն առատ ջրել: Այնուհետև, առանց բույսը շրջելու, մուրճով կամ կացնի կոթով պետք եւ միքանի անգամ խփել կիսատակառի պատերին, վորից հետո բույսը թեքում են կողքի վրա և խփում հատակին: Սրանից հետո բռնելով բույսի ցողունից, կիսատակառից—ծաղկամանից այն պետք եւ զգուշությամբ հանել: Ցանկալի յե, վոր այս գործողությունը կատարեն յերկու հոգի, ըստվորում մեկը ձգում ե




Նկ. 16. Կիտրոնի վերաշրջում

բույսը, մյուսը՝ ծաղկամանը 40—45 ոմ լայնության ծաղկամանից խոշոր բույսերը վերաշրջելու ժամանակ անպայման պետք եւ մասնակցեն յերկու հոգի: Բույսը հողագնդի հետ պետք եւ հանել շատ զգուշ, սահուն քաշել և չթափահարել, այլապես գնդի հողը կարող եւ ցրվել—թափել և արմատները վիրավորվել վորը մեծ մասամբ վերջանում է բույսի վոչնչացումով: Յեթե վախ կա,

վոր գունդն առանց ցըելու հնարավոր չե հանել, ապա ավելի լավ ե ամբողջ կիսատակառ զգուշորեն քանդել, և այդ ձևով դունդը հանել:

Նախքան վերատնկման ձեռնարկելլը նրա անհրաժեշտության մասին պետք ե հավաստիանալ: Դրա համար հարկավոր ե ծաղկամանից վերցնել 3—5 սմ հաստությամբ հողի վերին շերտը և յեթե նրա յեղբերին այդ մասում արմատներ չնկատվեն, նշանակում ե վերատնկումը կարելի յե հետաձգել մյուս տարվան:

Վորպես որենք՝ վերաշրջում կատարվում ե այն ժամանակ, յերբ ծաղկամանի հողն ուժեղ չափով փաթաթվում—հյուսվում ե արմատներով, վորը և վերատնկման անհրաժեշտության հատկանիշն ե հանդիսանում: Բույսի յուրաքանչյուր վերաշրջման ժա-



Նկ. 17. Արմատներով հյուսված հողի գունդը

մանակ ամանը պիտի մեծացնել, բայց զա պետք ե անել հետզհետե. սովորաբար ամանը կարելի յե մեծացնել 4 սանտիմետրից վոչ ավելի (վերին լայնքը):

Հանած դունդը պետք ե նախասլատրաստել վերատնկման համար: Դրա համար փոքրիկ փայտով հարկավոր ե քըքըել ստեղծված արմատների ցանցը և հեռացնել հողի արտաքին՝ հյուծված շերտը (2—5 սմ հաստությամբ), վորից հետո մեծ խնամքով ստուգել արմատային սիստեմը և բոլոր թույլ, հիվանդոտ ու վիրավորված արմատներն ամբողջովին հեռացնել:

Շատ ուժեղ աճող արմատները պիտի քիչ կարճացնել:

Վերատնկման համար ծաղկամանը կամ կիսատակառը նախապատրաստում են նույն ձևով, ինչպես նախնական տնկելու

Ժամանակ: Անցըը ծածկվում ե խեցիի կտորով, հատակին լցնում են 2—5 սմ հաստությամբ ավաղի շերտ, իսկ նրա վրա՝ հողի շերտ: Վերատնկման համար նախապատրաստված բույսը կիսատակառի մեջ պետք ե տեղավորել այնպես, վոր ցողունը դոնվի կիսատակառի ուղիղ մեջտեղը: Այդ ժամանակ յեթե նկատվի, վոր արմատավզիկն ավելի խորը կամ յերես ե մնացել, այսինքն՝ հողի մակերեսից վերև կամ ներքև, ապա համապատասխանորեն հող պիտի լցնել կամ մի շերտ վերցնել: Բույսը կիսատակառի մեջ տեղավորելուց հետո աղատ մնացած տարածությունները հող պետք ե լցնել այնպես, վոր ծաղկամանի մեջ դատարկ տեղեր չմնան, ուստի հողն ամբողջ ժամանակ պետք ե ձեռքով կամ փայտով նստեցնել:

Հողի մակերեսը կիսատակառի

վերին յեղբից պետք ե 1—3 սմ ցածր լինի: Այդ տարածությունը, ինչպես նշվեց, անհրաժեշտ ե ջրելու համար: Նրա բացակայության դեպքում ջուրը յեղբերից կսկսի թափել և բույսը նորմալ ջրելն անհնարին կդառնա: Վերատընկելուց հետո բույսը հարկավոր ե առատորեն ջրել, այնպես վոր ծաղկամանի ամբողջ գունդը մինչեվ հատակը թրջվի:

Վորքան մեծ և խոշոր ե բույսը, այնքան դժվար ե վերատընկելը: Ուստի շատ խոշոր բույսերի համար, վորոնց վերատնկումը կապված ե մեծ դժվարությունների հետ, կարելի յե բավականանալ միայն հողի վերին շերտը փոխելով: Դա վորոշ չափով փոխադարձ կատարել այն բույսերի համար, վորոնց վերատնկումն արդեն դադարեցված ե, այսինքն՝ յերբ կիսատակառի չափը կհասնի մոտավորապես 50 սմ-ի: Ուստի պիտի հողի վերին շերտը վերցնել այնչափ, մինչև վոր կնկատվին արմատների մանր ճյուղավորությունները (սակայն հողը մեկ յերրորդից ավելի խորը չի կարելի վերցնել): Վերցրած



Նկ. 18. Հողագնդի վերապատրաստումը տնկելու համար

վերին շերտի թարմացում անպայման պետք ե կատարել այն բույսերի համար, վորոնց վերատնկումն արդեն դադարեցված ե, այսինքն՝ յերբ կիսատակառի չափը կհասնի մոտավորապես 50 սմ-ի: Ուստի պիտի հողի վերին շերտը վերցնել այնչափ, մինչև վոր կնկատվին արմատների մանր ճյուղավորությունները (սակայն հողը մեկ յերրորդից ավելի խորը չի կարելի վերցնել): Վերցրած

հողի փոխարեն անհրաժեշտ ե լցնել թարմ հող, իսկ ավելի լավ ե՝ փոխահող կամ բոլորովին քայլայված գոմաղբ։ Հողը վոչ մի դեպքում չի թույլատրվում փոխարինել թարմ, մանավանդ ձիռ գոմաղբով։

Ավելի փոքր բույսերի համար չի կարելի բավարարվել միմիայն հողի թարմացումով, քանի վոր նրանց վերատնկումը հեշտ ե և զգալիորեն լավ արդյունք ե տալիս։

ՊԱՐԱՐՏԱՆՅՈՒԹԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

Ցիտրուսային բույսերը, նույնիսկ բացոթյա աճողները, ամեն տարի մեծ կարիք են զգում պարարտացման։ Այստեղից հասկանալի յե, վոր ծաղկամանների կամ կիսատակառների մեջ աճեցրած բույսերի պարարտանյութերի պահանջն ավելի մեծ է, վորովհետև նրանց համար հողից սննդանյութեր ստանալու հնարավորությունը սահմանափակված և ծաղկամանի մեծությամբ։ Շատ սիրողների մոտ դժնված բույսերի հիվանդու տեսքի և թույլ աճեցողության հիմնական պատճառներից մեկը բույսի բավականաչափ սննդարար նյութեր չստանալն է։

Անհրաժեշտ ե նկատի ունենալ, վոր կիսատակառի հողի թարմացմամբ կամ վերատնկմամբ չի կարելի ապահովել բույսի նորմալ սնունդը, իսկ յեթե ավելացնենք նաև այն, վոր շատ սննդանյութեր ջըելու ժամանակ ջուրը քշում, տանում ե, ապա պատկերը պարզ կմնի։ Ուստի և սենյակում աճեցվող բույսերի համար պարարտացումը միանդամայն անհրաժեշտ է։

Ցիտրուսային բույսերի համար կարելի յե գործադրել թե այսպես կոչված՝ որգանական պարարտանյութերը, վորոնց թվին են պատկանում գոմաղբն ու հավի ծերտը և թե հանքային պարարտանյութերը՝ ազոտային, ֆոսֆորային և կալիական աղերը։ Պարարտանյութերի բոլոր տեսակները, թե որգանական և թե հանքային, լավ ե մտցնել հեղուկ վիճակում։ Պարարտացման այս ձեի դեպքում նրանք բույսերի կողմից ավելի լավ են ոգտագործվում, և արմատները չեն այրվում, վոր հաճախ տեղի յե ունենում պարարտանյութերը չոր վիճակում մտցնելու դեպքերում (վերջինս վերաբերում ե գլխավորապես հանքային պարարտանյութերին)։

Նորմալ պայմաններում (ժամանակին կատարված վերատընկան դեպքում) պարարտանյութերը պետք ե մտցնել պտղաբերման

հետ միատեղ: Իսկ առաջին յերկու տարիները՝ լավ սննդարար հող լինելու դեպքում՝ բույսերը միանգամայն աղատորեն կարող են ապրել առանց պարարտանյութերի:

Հանքային պարարտանյութերի գործադրման ժամանակ անհրաժեշտ է հիշել, վոր ազոտային պարարտանյութերը՝ սելիտրա, ծծմբաթթվային ամոնիում, ցիտրուսային բույսերի, առանձնապես կիտրոնի համար ամենաանհրաժեշտ պարարտանյութն են, վորովհետև նրանք նպաստում են բույսի լավ աճման և պտղատու բողբոջների կազմակերպման: Սակայն մեծ չափով ազոտային պարարտանյութ գործադրելու դեպքում բույսերն ավելի ուժեղ են աճում և յերկար ժամանակ չեն պտղաբերում:

Յուֆորային պարարտանյութերը (սուպերֆոսֆատ, թոմաս-լի, վուկրալյուր, ֆոսֆորիտ) նպաստում են լավ պտղաբերման և արագացնում են պտուղների հասունացումը:

Կալիական պարարտանյութերը (սիլվինիտ, քլորական բարի, մոխիր) նպաստում են բնափայտի փայտացմանը, ինչպես նաև աղոտի և ֆոսֆորի լավ յուրացմանը:

Լավ արդյունքներ ստանալու համար անհրաժեշտ է բույսին տալ, այսպես կոչված՝ լիվ պարարտացում, այսինքն՝ այնպիսի պարարտացում, վորի մեջ մտնելին թե ազոտային, թե ֆոսֆորային և թե կալիական աղերը:

Լրիվ պարարտանյութ պատրաստելու համար պետք է մի լիոր ջրի մեջ լուծել մեկական գրամ ծծմբաթթվային ամոնիում, սուպերֆոսֆատ և կալիական աղ: Սուպերֆոսֆատը վատ և լուծվում, ուստի այն վազորոք (մեկ որ առաջ) պիտի լուծել վորի ընթացքում մի քանի անգամ խառնել այնուհետև, յերբ սուպերֆոսֆատը լավ կլուծվի, հարկավոր է այս լուծույթին ավելացնել ծծմբաթթվային ամոնիումը և կալիական աղը: Յեթե հատակում նստվածք առաջանա, լուծույթը պետք է լցնել մի այլ ամանի մեջ, իսկ այնուհետև արդեն նրանով բույսը ջրել:

Որդանական պարարտանյութերը նույնպես լավ է մտցնել հեղուկ վիճակում: Դրա համար գույլի կամ վորեն բանկայի մեջ նրանց մեկ յերրորդի չափով պետք է թարմ գոմադր լցնել (ամենից լավ է ձիու, բայց կարելի յեն նաև ոգտագործել կովի աղը և թոչունի ծերոր). հետո ամանը պիտի ջուր լցնել և այդ խառնուրդը պահել 10—15 որ, վորի ընթացքում որական 2—3 անգամ խառնել: Պատրաստ հեղուկը պիտի լցնել մի այլ ամանի մեջ, իսկ գոմադրի մնացորդը բոլորովին թափել: Ստացված լու-

ծույթը շատ ուժեղ պարարտանյութ է և այդ ձևով գործադրել չի կարելի, նա կարող է այրել արմատները, ուստի և հարկավոր է ջրի մեջ լուծել հետեւյալ հաշվով՝ մեկ լիտր լուծույթին ավելացնել 14 լիտր ջուր:

Հեղուկ պարարտանյութով ջրելուց առաջ բույսերը պետք են սախազես ջրել մաքուր ջրով։ Դրանից հետո բույսը կարելի յե ջրել պատրաստած լուծույթով այնպես, վոր գունդն ամբողջովին լավ թրջվի (վոր լուծույթն սկսի հոսել ներքեւ անցքի միջով) և լուծույթով ջրելուց հետո, բույսը նորից հարկավոր է մաքուր ջրով թեթև ջրել՝ աշխատելով սրսկել նաև ամբողջ բույսը։

Հանքային պարարտանյութերի լուծույթով ջրելը պետք է սկսել գարնանը, յերբ բույսն սկսում է աճել—մարտ-ապրիլ ամիսներին, և կրկնել յուրաքանչյուր յերկու շաբաթը մեկ անգամ։

Գոմաղբային լուծույթով ջրելը կատարվում է յերկու անգամ. առաջին անգամ՝ գարնանային աճեցողության սկզբին (մարտ, ապրիլ), և յերկրորդ անգամ՝ ամառը՝ հունիս, ոգոստոս ամիսներին։

Ընդհանրապես վորքան¹ բույսը մեծ և և քիչ անգամ ու դժվար է վերատնկվում, այնքան հաճախ պիտի պարարտացնել։ Ծանոթ լինելով առանձին տեսակի պարարտանյութերի ներդրությանը և նրանց /աղղեցությանը բույսի զարգացման վրա, կարելի յե փոխել վորեե պարարտանյութի նորմաները, իսկ անհրաժեշտության դեպքում մացվող պարարտանյութի կազմից այն բոլորովին հանել։ Որինակ՝ հողի մեջ աղոտակին միացությունների ավելցուկի դեպքում բույսը կակսի տալ ճյուղերի և տերեների ուժեղ աճեցողություն և բույսը քիչ կպաղաքերի, ըստվորում կիտրոնի տյղուկուի գեղագերում սովորաբար տալիս ե, այսօրես կոչված՝ հոռամտեր (խոշոր, ուժեղ աճող շվեր), կալիական միացությունների ավելցուկի գեղքում կիտրոնի տերեների վրա յերեսում են մանր զեղին թծեր, տերենների այդ հիվանդությունից թուրանում և ամբողջ բույսը Այսպիսի գեղքերում խառնուրդից պետք է հանել այն տեսակները, վորոնցից հողի մեջ շատ կատ-

ԲՈՒՅՍԵՐԸ ԶՐԵԼԸ ՅԵՎ ՍՐՍԿՈՒՄԸ

Բույսի նորմալ զարգացման համար ջուրը նույնչափ անհրաժեշտ է, ինչպես ողն ու լույսը, ուստի և անհրաժեշտ է ժամանակին տպահովել անհրաժեշտ քանակությամբ ջրով։ Պետք է

աշխատել, վոր հողը միշտ թեթև խոնավություն ունենա ,կամ, ինչպես տսում են՝ «թարմ» վիճակում լինի, այսինքն՝ վոչ չոր և վոչ ել շատ խոնավ: Յեթե հողը բավականաչափ խոնավ լինի, այն ժամանակ դրանից պատրաստված գունդը ձեռքի մեջ թեթև սեղմելու դեպքում հեղտությամբ կցըվի: Յեթե հողը բոի մեջ գունդ չի դառնում (փշրվում ե), դա նշանակում է, վոր բույսը ջրի ուժեղ պահանջ ե զգում, իսկ յեթե հողի գունդը սեղմելու դեպքում չի փշրվում, նշանակում է հողը շատ ե խոնավ և անհրաժեշտ ե չորացնել՝ վորոշ ժամանակ ջրելը դադարեցնել:

Յուրաքանչյուր բույսի համար անհրաժեշտ ջրի ճիշտ քանակը վորոշել շատ զժվար է: Դա կախված է յեղանակից (անձրեւվոտ, ամպամած կամ պարզ յեղանակ, շող և զով յեղանակ), տարվա ժամանակից, ծաղկամանի մեծությունից և բույսի տերևակալման աստիճանից:

Անձրեւտ յեղանակին ըաց ողում գտնվող բույսը բոլորովին ջրելու կարիք չի զգում, իսկ ամպամած և զով յեղանակին նույն բույսերն ավելի քիչ ջուր են պահանջում, քան պարզ, շող որերը:

Պորքան ծաղկամանը մեծ է, այնքան շատ ջուր և հարկավոր: Խիտ տերևակալած բույսն ավելի շատ և ջուր գոլորշիացնում և ավելի շատ և ջուր պահանջում, քան միջակ ու թույլ տերևակալածը:

Բույսի հաճախ ջրելը կախված է տարվա ժամանակից, յեղանակի դրությունից, ամանի մեծությունից, ինչպես նաև զարգացման փուլից (ֆազից), որինակ՝ ծաղկում, հասունացում, պտղաբերում և այլն, և նրա ընդհանուր դրությունից:

Ամառը, չոր և շող յեղանակին, ցիտրուսային բույսերը պետք ե ջրել ամեն որ, իսկ յերբեմն որուկան յերկու անգամ: Ամպամած յեղանակին ջրում են յերկու որը մեկ անգամ, կամ ավելի ուշում: Աշնունք և ձմեռն ավելի ուշ ունուի ջրերը չարաթը մեկ անգամ: Գարնանը պետք է ուժեղ ջրեր համենայն դեպք յերբեք չպետք և թույլ տար, վոր հողը շատ չորանա: Դա հատկապես վերաբերում է ծաղկող և պտղաբերող բույսերին, զրանից ծաղիկները և պտուղները թափում են, ըստվորում նրանք կարող են թափել նույնիսկ այն ժամանակ, յերբ հողը շատ չորանալուց հետո առատ ջրվի:

Բույսերին մեծ վնաս և հասնում սիստեմատիկ ավելցուկ ջրելը: Դրա հետևանքով հողը թթվում է և բույսն սկսում է հիվանդանալ հողի թթվելու նշաններն են՝ հողի թթու հոտը, ինչպես նաև տերեների դեղնելը, վոլորվելը և մատղաշ տերեների,

ծաղիկների, կոկոնների, ինչպես նաև պտուղների թափվելը:

Այդպիսի դեպքերում պետք է ծաղկամանից կամ կիսատակառից հողի գունդը հանել և մաքրել, հեռացնել փչացած թթված հողը, իսկ անհրաժեշտության դեպքում հեռացնել ամրող հողը և բոլոր փտած արմատները սուր դանակով կտրել: Դրանից հետո բույսը վերատնկել թարմ հողի մեջ (ցանկալի յե փոքր չափի ծաղկամանի մեջ): Այդ աշխատանքը կատարելու ժամանակ անպայման անհրաժեշտ է կտրել նաև բույսի վերերկրյա մասերը՝ նայած արմատային սխտեմի կտրելու չափին, կանգ չառնելով նույնիսկ այն բանի առաջ, վոր յուրաքանչյուր բույսի վրա թողնվի միմիայն միքանի հաստ ճյուղ, յուրաքանչյուրը 2—3 աչքով:

Հողի վողողվելը և թթվելը կարող է առաջանալ վոչ միայն շատ ջրելուց, այլև կիսատակառի հատակում դրենաժային անցքի անկանոնությունից: Դա կարելի յե հեշտ նկատել, վորովհետեւ ջրելու ժամանակ ջրի ավելցուկը դուրս չի հոսում: Անցքը մաքրելու համար պետք է փայտի կտոր խրել անցքի մեջ այնպես, վոր նրան ծածկող խեցին թւթե բարձրանա:

Բացի ջրելուց, բույսի նորմալ զարգացման համար անհրաժեշտ են նրա վերերկրյա մասը սխտեմատիկորեն սրսկել ջրով: Սրսկումը պետք է կատարել ամրող ամռան և աշնան ընթացքում, բույսը ջրելու հետ միաժամանակ՝ վաղ առավոտյան կամ յերեկոյան: Վոչ մի դեպքում չի կարելի ցերեկը սրսկել, մանավանդ յերբ նա գտնվում է արևի տակ, վորովհետեւ հաճախ դրանից տերևների այրվածքներ են առաջանում: Ինչպես վերն ասվեց, սրսկել կտրելի յե մանր մաղ ունեցող ցնցուղներով կամ սլուղերի դատորներով:

Թե ջրելու, թե սրսկելու ժամանակ, տարվա վոր ժամանակին ել կատարվելիս լինի դա, անհրաժեշտ է միշտ ուշադրություն դարձնել ջրի ջերմաստիճանի վրա: Վորպես կանոն, ջուրը պետք է ունենա շրջապատող ողի ջերմաստիճանը:

Ամառը ջրհորների և ջրմուղների ջրի ջերմաստիճանը ցածր է լինում ողի ջերմաստիճանից, ուստի և ջրելու համար ջուրը պետք է վերցնել վաղորոք՝ 4—5 ժամ առաջ, վորպեսզի նա կարողանա տաքանալ:

Զմեռը ջուրը լավ տաքացնելու համար պետք է պահել սենյակում կամ այն շենքում, վորտեղ գտնվում են բույսերը:

Վոչ մի դեպքում աճող բույսերը չի կարելի ջրել սառը ջրով, վորովհետեւ ծաղկամանի հողի և ջրի ջերմաստիճանի տարբերությունը

բավական մեծ և լինում և հանկարծակի ցըտեցումը կանգնեցնում ե բույսի զարգացումը, նույնիսկ չորացնում ե,

Սառը ջրով սրսկել թույլատրվում և միմիայն ռկարմիք սարդիկ» մխասատուի դեմ՝ վորպես պայքարի միջոց։ Մյուս բոլոր դեպքերում, վորոնց թվում և այլ մխասատուների դեմ պայքարելու ժամանակ, ջուրը պետք է նախապես տաքացնել մինչև սենյակի ջերմաստիճանը։

ՀՈՂԻ ՓԽՐԵՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՄԱՆԵՂԵՆԻ ԽՆԱՄՔԸ

Բույսի արմատները թարմ ողի մշտական հոսանքի կարիք են զգում, ուստի ծաղկամանի մեջ հողը միշտ պետք է փուխր վիճակում պահել, վորպեսզի նրա մեջ ողը հեշտությամբ անցնի։ Հաճախակի ջրելուց հողը պնդանում է, իսկ դա վերացնելու համար մակերեսային շերտը 2—3 ոմ խորությամբ պարբերաբար, շարաթը մեկ անգամից վոչ պակաս, պիտի փխրեցնել։ Ավելի խորը փխրեցնելու դեպքում (մանավանդ փոքր ծաղկամանների մեջ) արմատները կարող են մխասվել։ Փխրեցնել կարելի յե սովորական փայտի կտորով։

Հողի մակերեսին մամուռ կամ բորբոս յերեալու դեպքում պետք է նրանք անմիջապես հեռացնել։ Յեթև մամուռը կամ բորբոսն սկսեն հաճախակի յերեալ, ապա հողի մակերեսային շերտը պիտի փոխարինել թարմ հողով։

Ծաղկամանի և կիսատակառի կողերին յերեացող բորբոսը պետք է պարբերաբար մաքրել։ Ծատ լավ կլինի ամանի արտաքին պատերը շարաթական մեկ կամ յերելու անգամ տաք ջրով լվանալ։


ԿԻՏՐՈՆԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԵՏԸ

Կիսատակառում մշակվող կիտրոններն անպայման պետք ե ետել և ձեռավորել, այլապես նրանք շատ վատ կատ կպտղաբերեն։ Բույսը ձեռավորում են այն ավելի արդյունավետ դարձնելու և գեղեցիկ տեսք տալու նպատակով, վորովհետեւ սենյակի պայմաններում կիտրոններն անեցվում են վոչ միայն պտուղներ ստանալու, այլև շինքը դարդարելու համար։ Պարբերական ետն անհրաժեշտ է բույսը վորոշ ձեի պահելու և հավասարաչափ պտղաբերելու համար։

Կիսատակառում գտնվող կիտրոնի բույսին կարելի յե տալ

ցանկացած ձեր, բայց սենյակի պայմանների համար, հատկապես կտրոններով բազմացնելու դեպքում, ավելի լավ է թփի ձեր, կամ, ինչպես այն անվանում են՝ թփածե։ Պատվաստված բույսերը մշակելու դեպքում կարելի յե տալ ծառի ձե, վորը կոչվում ե բնային ձե։

Բնային ձե ստանալու համար պետք ե նախապես ստանալ բունը (ցողունը). Նախած ցանկության և այն պայմաններին, վորտեղ բույսն ե գտնվելու, բունը կարելի յե ստանալ ուղած բարձրությամբ, բայց այս դեպքում անհրաժեշտ ե նկատի ունենալ, վոր վորքան բարձր լինի բունը, այնքան յերկար ժամանակ ե հարկավոր այն աճեցնելու համար և այնքան ուշ կսկսվի բույսի ուղղաբերությունը։ Սովորաբար ցողունն աճեցնում են 30—40 սմ բարձրությամբ։ Պատվաստած կիտրոնների ձևավորումն անհրաժեշտ ե սկսել աչքատվաստից հետո։ Դրա համար, ինչպես վերն ասվեց, աչքատվատվաստից հետո աճած շիվը պետք ե կտապիլ ցցի, վորպեսզի նո ուղիղ դեպքի վեր աճի։ Բույսի վրա կողային ճյուղեր յերեալու դեպքում հարկավոր ե նրանք ժամանակավորապես թողնել ազատորեն աճելու, վորպեսզի բույսն ամրողությամբ լավ զարգանա։ Սակայն, յեթե նրանք իրենց աճով հասնում են գլխավոր (կենտրոնական) շվե աճին, պետք ե յեղունգով նրանց ծայրերը կտրել (ձերատել), Յերբ կենտրոնական շիվը կհասնի 50—60 սմ բարձրության և բավական կամրանա, 30—40 սմ բարձրության վրա կտրելի յե ձևավորել կողային ճյուղերը, վորոնք կկազմեն ծառի սաղարթը։



Նկ. 19. Աչքատվաստից հետո աճած շիվը, վոր կապած և ցցին

Դրա համար 30—40 սմ ցած աճող լուր ճյուղերը հիմքից պետք ե կտրել։ Մնացած ճյուղերից ընտրում են զանազան կողմեր ուղղված մոտավորապես 3—5 հատ՝ հետագա սաղարթի համար, վորոնք պետք ե թողնել առանց ետի, իսկ մյուսները հիմքից կտրել։ Հետագայում պետք ե հետևել վորպեսզի թողած



Նկ. 20. Լավ ձեռվորված կիտրոն



Նկ. 21. Վահանակիրները մանղարինի տերեների վրա

ճյուղերն աճեն ցանկալի ուղղությամբ։ Յեթև ճյուղերից վորսե մեկն սկսում ե ուժեղ չափով աճել և մյուսներից անցնել, հարկավոր ե ծերատել՝ այն թուլացնելու և մյուսներն ուժեղացնելու համար։ Հետագայում միշտ պետք ե հետեւել, վորպեսզի ճյուղերը հավասարաչափ զարգանան և ծառի ձեր միշտ պահպանվի։ Դեպի սաղարթի ներսն ուղղված բոլոր ուժեղ աճող հյուղերը, վորոնք կարող են սաղարթը խտացնել, հարկավոր ե կտրել։

Թփածե բույս ստանալու համար կենտրոնական շիվը 18—20 սմ յերկարության հասնելուն պես պետք ե ծերատել, վորի, հետեւանքով կողային շիվեր են առաջանում։ Կողային շիվերից պիտի ընտրել ամենազարգացած և հավասարապես դասավորված 3 ճյուղ, իսկ մյուսները կտրել։

Մեկ տարուց հետո այդ յերեք շիվը նորից պիտի ծերատել և նրանց վրա աճող կողային շիվերից թողնել միմիայն յերկուական հատ—ամենալավերը, առողջները։ Այսպիսով ստացվում ե արդեն վեց ճյուղ, վորից հետո բույսն այլևս չի ծերատվում և ձեւավորումը կարելի յե ավարտված համարել։ Հետագայում հարկավոր ե միմիայն հետեւել, վորպեսզի ստեղծած ձեր պահպանվի։

Բնդիանը ձեւավորման ժամանակ պետք ե աշխատել, վորքան կարելի յե, բույսը քիչ կտրել։ Ամենից լավ ե բույսը ձեւավորել շվերի աճի ժամանակ նրանք ծերատելով։ Հետագայում բույսի ետը կայանալու յե դիմավորապես սաղարթի ճյուղերը նոսրացնելու մեջ։ Այս դեպքում պիտի կտրել բոլոր թույլ շիվերը, ինչպես նաև այն ճյուղերը, մանաւանդ միջին մասում, վորոնք խտացնում են սաղարթը։ Բացի սաղարթի նոսրացումից, կիտրոնը պետք ե ետել նաև պտղաբերման համար, այլապես նա վատ կպտղաբերի։

Կիտրոնը սովորաբար պտղաբերում ե մեկ տարեկան կարճ ճյուղերի վրա։ Միաժամանակ նա հակված է ուժեղ, յերկար շիվեր (հոռամատեր) տալու, վորոնք պտղաբերող ճյուղերից խլում են զգալի քանակությամբ սննդանյութ, իսկ իրենք չեն պտղաբերում։

Կիտրոնի ետի նպատակն ե հնարավորին չափ շատ կարճ շվեր (15—20 սմ յերկարությամբ) առաջացնել, վորոնք պտղաբերելու յեն իրենց առաջանալու հաջորդ տարին։ Այդ նպատակին հասնելու համար բոլոր ուժեղ աճող ճյուղերը պետք ե ետել նրանց յերկարության մեկ յերրորդի կամ կեսի չափով, նայած աճի ուժեղությանը։ Բնդիանը չպետք ե թույլ տալ, վոր այդպիսի

ուժեղ շվեր առաջանան։ Աճի ժամանակ ուժեղ զարգացող շվերի ծերատումը նպաստում է նրանց վոչնչացմանը։

Վորովհետեւ կիտրոնը համարյա թե հանգստի շրջան չունի, ուստի ծերատել կարելի յե ամբողջ տարվա ընթացքում։ Տարեկան մեկ անգամ պետք է կտրել արդեն պտղաբերած շվերը, վորովհետեւ նրանք, միևնույն ե, հաջորդ տարին պտուղներ չեն տալու, և միմիայն խտացնելու յեն սաղարթը։ Միաժամանակ պիտի կտրել բոլոր թույի, ձգված և ծոված ճյուղերը, վորոնք չեն պտղաբերելու, կամ թե կարող են մանր, տղեղ, ցածրաբժեք պտուղներ տալ։

Պտղաբերելու համար ետք պետք է սկսել բույսի կյանքի յերրորդ տարուց, կամ թե առաջին պտղաբերման հետեւյալ տարին։

Նոսրացման և ետի բոլոր ոպերացիաները կատարվում են վաղ գարնանը (ապրիլ-մայիս), իսկ ծերատումը՝ ամբողջ տարվա ընթացքում։

Սենյակի պայմաններում, առաջին պտղաբերումից 8—10 տարի անց յերիտասարդ ճյուղերի առաջացումը դանդաղում է, իսկ հին, արդեն պտղաբերած ճյուղերը մեռնում են։ Այդպիսի բույսերը շատ թույլ են պտղաբերում։ Վորպեսզի նրանք նորից սկսեն լավ աճել և պտղաբերել, հարկավոր ե բույսը յերիտասարդացնել, վերի համար բոլոր մանր ճյուղերն ամբողջովին կտրվում են, իսկ խոշորներն ետքում են իրենց յերկարության կեսի, կամ յերկու յերրորդի չափով։ Այս զեպքում բույսի մեջ սննդանյութերի տեղափոխության համար նրա վրա քիչ քանակությամբ՝ տերեներով ճյուղեր պետք է թողնել։ Այդպիսի ետից հետո բույսը պետք է տեղափոխել ավելի սննդաբար հող ունեցող ծաղկամանի մեջ։ Բույսը պետք է յերիտասարդացնել վաղ գարնանը։

ԿԻՏՐՈՆՆԵՐԻ ԲԵՐՔԻ ՆՈՐՄԱՎՈՐՈՒՄԸ

Ճյուղերով աճեցված կիտրոնները շատ վաղ են պտղաբերում, յերբեմն նույնիսկ ճյուղի արմատակալման առաջին կամ յերկրորդ տարին, իսկ յերրորդ տարին, վորպես կանոն, առատ ծաղկում և պտղաբերում են։

Շատ սիրողներ բոլորովին հաշվի չառնելով բույսի հասակը և նրա դրությունը, առաջին ծաղիկները—պտուղները յերեսալիս ամբողջովին թողնում են։ Այդպիսի բան չպետք է թույլ տար, վորովհետեւ պտուղների մեջ քանակը յերիտասարդ բույսն ուժեղ

Հափով հյուծում եւ կտրոնի արմատակալման առաջին և յերկը սուրդ տարին կիտրոնի բույսի վրա յերեացող բոլոր ծաղիկները պետք եւ պոկել, յերբորդ տարին արդեն կարելի յէ թողնել 6—8 ծաղիկ, իսկ յեթե նրանք բոլորն ել պտուղ բռնեն, ապա նրանցից հարկավոր և թողնել 2—3 հատից վոչ ավելի, բայց ամենից լավ եւ այդ պտուղներն ել չթողնել և համբերություն ունենալ մեկ տարի ես սպասելու: Չորրորդ տարին արդեն կարելի յէ թույլ տալ աղատորեն ծաղկելու, բայց պահել 6—7 նոր կազմակերպված պտղից վոչ ավելի: Դրա համար պետք եւ ընտրել և պահել ամենալավ զարգացած պտուղները, իսկ մնացած բոլորը պոկել: Առաջին հերթին պոկում են թույլ, իրար շատ մոտ գտնված թույլ զարգացած շվերի վրա յեղած պտուղները:

Այդպիսի նորմավորման ժամանակ ստացվում են ավելի խոշոր և բարձր վորակի պտուղներ, բույսն ել նորմալ կերպով զարգանում եւ չետագայում նորմավորումը կատարվում և ամեն տարի:

Ծաղկելոց 2—3 շաբաթ հետո, նայած բույսի հասակին և աճեցողության ուժին, չտարիվելով պտուղների առատությամբ, անհրաժեշտ եւ նրանք նոսրացնել՝ թողնելով այնքան պտուղ, վոր բույսը կարող ե սնել և զարգացնել, հակառակ պարագայում կստացվեն մանր պտուղներ, իսկ ինքը բույսն ել շատ կհյուծվի: Հեգագայում, բույսը մեծանալուն զուգընթաց, խոշոր և լավորակ պտուղներ ստանալու համար, բոլոր կազմակերպված պտուղներն ամրողացնելությամբ չպետք եւ պահել, այլ կիսով չափ, մնացածը պոկել:

ՊԱՅՔԱՐ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՅԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ

Սենյակի պայմաններում ցիտրուսային բույսերի վրա ամենից հաճախ պատահում են զանազան տեսակ վահանակիրներ: Դրանք միջատներ են, թեկուղ և իրենց արտաքին տեսքով միջատների նման չեն: Վահանակիրները մարմնի վերևից ծածկված են մուգ դարչնագույն կամ նարնջադեղնավուն գույնի վահանիկով: Առանց բացառության բոլոր վահանակիրներն անշարժ են և սովորաբար տեղափորված են լինում տերեների ներքեի մասում, յերիտասարդ ճյուղերի և նույնիսկ պտուղների վրա: Վահանակիրները ծծում են բույսի հյութը և այն խիստ թուլացնում են:

Վահանակիրները բազմանում են շատ արագ: Նրանք տարեկան տալիս են 2—3 սերունդ և յեթե նրանց յերեալուն պես պայքարի շտապ միջոցներ ձեռք չառնվեն, բույսը կարող ե բոլորովին վոչնչանալ: Վահանակիրների դեմ պայքարում են յուղաստալնային եմուլսիա կամ անարազին ուղժատ կոչված բուժանյութը սրսկելով: Յեթե պատրաստ յուղասազնային եմուլսիա հարավոր չե ձեռք բերել, կարող եք պատրաստել ինքներդ: Պետք ե վերցնել 4 կշռային մաս տրանսֆորմատորի յուղ և մեկ մաս կանաչ սապոն: Սապոնը յուղի հետ պետք ե քիչ ջրի մեջ այնպես տրորել, վոր խառնուրդից ստացվի թանձր փրփրակալած զանգված: Ստացված զանգվածը պիտի խառնել ջրի հետ՝ խառնուրդ պատրաստելու համար վերցրած յուղի յուրաքանչյուր 20 գրամին մեկ լիոր ջրի հաշվով: Ստացած խառնուրդով կարելի յե բույսը սրսկել:

Ինչպես վերը մատնանշվեց, քիչ քանակի բույսերը պետք ե սրսկել պուլվերիզատորով, իսկ մեծ քանակությամբ բույսեր ունենալու դեպքում՝ հատուկ սրսկիչ մեքենայով: Այդ ժամանակ պետք ե հետեւ, վորպեսզի բույսը սրսկված լինի բոլոր կողմերից, ինչպես նաև ճյուղերի արանքները, մանավանդ տերևների ցածի կողմերը:

Նարինջները յուղով չպետք ե սրսկել, նրանց կարելի յե միմիայն կանաչ սապոնի լուծույթ սրսկել:

Անարազին սուլֆատի լուծույթ պատրաստելու համար պետք է վերցնել 4 լիոր ջուր, մեկ գրամ անարազին սուլֆատ և 16 գրամ կանաչ սապոն: Սապոնը ջրի մեջ լուծելուց հետո պետք ե նրա վրա ավելացնել անարազին սուլֆատը:

Ալրու վտանբեկիրները գտնվում են տերևների, ցողունի և պտուղների վրա: Սովորական վահանակիրներից տարբերվում են շարժունությամբ՝ իրենց ամբողջ կյանքի ընթացքում:

Կարմիր տիգ.— Բացի վահանակիրներից ցիտրուսային բույսերին սենյակի պայմաններում վսասում ե նաև կարմիր տիգ վսասատուն: Կարմիր տիգը կամ կարմիր սարդիկը պատահում է սենյակի համարյա բոլոր բույսերի վրա. Դրանք աչքով հազիվ նկատելի սարդիկներ են, վորոնք նստած են տերևների ցածի կողմի վրա և իրենց հետեւից սպիտակ կետերի ձևով հետքեր են թողնում: Տզից ուժեղ վսասված տերևները դեղնում ե թափում են: Կարմիր տիգերի դեմ պայքարի միջոցները նույնն են, ինչ վոր վահանակիրների դեմ: Սրանց դեմ կարելի յե գործադրել նաև ծծմբով:

փոշոտում, բայց ծծմբի հոտը սենյակի համար շատ անախորժ է, ուստի ավելի լավ և պայքարել յուղասապնային եմուլսիայով։ Կարմիր տղի դեմ կարելի յե գործադրել նույնպես տերևները սառը ջրով լվանալու և սրսկելու միջոցը։

Պետք ե նկատել, վոր ընդհանրապես եմուլսիաներով սրսկելը բացասաբար է ազդում բույսի վրա, ուստի այն հաճախ գործադրել չի կարելի, այլ այդ միջոցին պետք է դիմել միմիայն բույսի ուժեղ վարակվածության դեպքում, տարեկան 2—3 անգամից վոչ ավելի։ Սրսկման լավագույն ժամանակը համարվում է ձմեռը։

Վորպես պայքարի միջոց, սենյակի պայմաններում միանգամայն հնարավոր ե գործադրել վնասատուների՝ ձեռքով հավաքումը։ Սակայն ձեռքով հավաքելու դեպքում ամենամանր, հասարակ աչքով հաղիվ տեսանելի միջատները մնում են բույսի վրա, վորոնք հետագայում մեծանում են և նորից բազմանում, ուստի անհրաժեշտ ե ամրող ժամանակ հետևել, և թույլ չտալ վնասատուներին ուժեղ բազմանալ։

Ավելի հեշտ ե կանխել վնասատուների և հիվանդությունների յերևալը, քան թե հետագայում նրանց դեմ պայքարելը։ Վնասատուների առաջ գալու դեմ նախազգուշական միջոցների կիրառման անհրաժեշտ պայման հանդիսանում է ժամանակին տարված խնամքը (վոռոգում, պարարտացում, վերատնկում և այլն)։ Վնասատուներ յերևալուն պես նրանց դեմ պայքարը պետք ե սկսել անմիջապես։

Հիվանդություններ.— Ցիտրուսների վրա ամենատարածված հիվանդությունը այսպես կոչված՝ գոմոզը կամ խեժահոսությունն է։ Խեժահոսությունը—բույսի ցողունից կամ ճյուղերից հեղուկի—խեժի արտահոսությունն ել վոր ողի մեջ սոսնձի նման պնդանում է։ Խեժահոսության դեմ պայքարելը բավական դժվար է։

Յեթե խեժահոսությունը լինում է ցողունի կամ հիմնական ճյուղերի վրա, ապա անհրաժեշտ ե ամրող վարակված մասը մինչեւ առողջ տեղը կտրել, խոկ վերքն անմիջապես ախտահանել պղնձարջասպի լուծույթով (մեկ լիտր ջրին 50 գրամ պղնձարջասպ), խոկ հետո ծածկել յուղաներկով կամ մածիկով։

Յեթե խեժահոսությունը՝ սկատվի արմատավզիկի մոտ կամ պատվաստի տեղից ցած, ապա կեղեկ մասնակի վարակման դեպքում պետք ե կտրել հիվանդությունը կեղելը ու բնափայտը։ Խոկ յեթե

հիվանդությունը զարգացել է ողակածև (ցողունի շուրջը), բույսը
պետք է վոչնչացած համարել և անմիջապես այրել

Վարակված ճյուղերն ու կեղեի մասերը կտրելուց հետո ան-
միջապես պիտի այրել, իսկ այն գործիքները, վորոնցով կտրել
են, պետք է ֆորմալինով ախտահանել:

Մրոս սունկ.— Մյուս հիվանդությունը, վոր հաճախ պատա-
հում է տերեների, ճյուղերի և պտուղների վրա, մըստ սունկ
կոչված հիվանդությունն է, վոր կազմում է սև փառ: Այս սունկը
բույսի վրա յերեան և գալիս բացառապես այն դեպքում միայն,
յերբ բույսն ուժեղ չափով վարակված է լինում վահանակիր
մասսատուով՝ ընակվելով նրա քաղցր տրտաթորությունների
վրա: Սունկն անուղղակի մասս և պատճառում. փառով ծածկելով
տերեները՝ դրանով դժվարացնում է բույսի շնչառությունը: Այդ
սունկի զարգացումը կանխելու համար պետք է խնամքով պայ-
քարել վահանակիրների դեմ: Վահանակիրների վոչնչացումով
կվերանան նաև այդ սնկերը:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

| | |
|--|-----------|
| Ներածություն | 3 |
| Ցիտրուսային բույսերի տեսակների և փոփոխակների ընտրությունը սենեկային մշակության համար | 7 |
| Կիտրոնի լավագույն սորտերը | 8 |
| Սենյակում բույսերն ինչպես դասավորել | 13 |
| Ամառը բացոթյա պայմաններում բույսերն ինչպես պահել . | 14 |
| Ցիտրուսային բույսերի սենեկային մշակության համար անհրաժեշտ ինվենտարը և ամանեղենը | 16 |
| Կիսատակառային մշակության համար հող պատրաստելը . . | 18 |
| Ցիտրուսային բույսերի բազմացումը | 20 |
| Բազմացումը կտրոններով | 26 |
| Բույսերի տնկումը ծաղկամանների և կիսատակառների մեջ | 30 |
| Բույսերի վերատնկումը | 32 |
| Պարարտանյութերի գործադրումը | 36 |
| Բույսերը ջրելը և սրսկումը | 38 |
| Հողի փխրեցումը և ամանեղենի ինամքը | 41 |
| Կիտրոնի ձևավորումը և ետը | 41 |
| Կիտրոնների ըերքի նորմավորումը | 46 |
| Պայքար վնասատուների և հիվանդությունների դեմ . . . | 47 |

ՀՀՀՀ

Թարգմանեց՝ Լ. Ռհանյան

Տեխ-խմբագիր և սրբագրիչ՝ Խ. Այվաղյան

Գլուխտի լիազոր № 1170

Հրատար. 417, տիրաժ 1500, պատվեր 327

Հանձնված է արտադրության 1937 թ. ապրիլի 3-ին

Սոսրագրված է տպադրության 1937 թ. ապրիլի 19-ին

Դյուլը բատի տպարան, Յերևան, Նալբանդյան, № 11

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0008446

ԳՐԱՅԻ ՅԵ ԿՈՎ.

214

A II
18675



Наркомзем Арм. ССР
М. Капцнель, А. Зарецкий
Комнатная культура
лимонов

Сельхозгиз

1937

Ереван